

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՔԱՐԱՐՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ԲԱԶԱԼՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՂ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱԶԱԼՏԵ ԿՈՊՃԻ ԱՐՏԴՐԱՄԱՍԻ /ԶԱՐԴԻՉ
ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԿԱՅԱՆՔԻ/ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ տնօրեն՝

Մ. Քյուրքյան

ԵՐԵՎԱՆ – 2025թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | |
|--------|---|----|
| 1. | ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ | 4 |
| 2. | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ..... | 7 |
| 3. | ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ..... | 7 |
| 4. | Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ | 11 |
| 5. | ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ..... | 15 |
| 5.1. | Զրոյական տարբերակ | 15 |
| 5.2. | Քննարկվող տարբերակներ | 16 |
| 6. | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ | 16 |
| 6.1 | Ընդհանուր տեղեկություններ տեղանքի մասին..... | 16 |
| 6.2 | Շրջանի աշխարհագրական բնութագիրը և ռելիեֆը | 20 |
| 6.3 | Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը..... | 21 |
| 6.5 | Կլիմա և օդային ավազան | 26 |
| 6.6 | Մթնոլորտային օդ..... | 28 |
| 6.7 | Հողային ռեսուրսներ | 30 |
| 6.8 | Ջրային ռեսուրսներ | 33 |
| 6.9. | Կենսաբազմազություն..... | 37 |
| 6.9.1 | <i>Բուսական աշխարհ</i> | 38 |
| 6.9.2 | <i>Կենդանական աշխարհ</i> | 40 |
| 6.9.3 | Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ | 42 |
| 6.10 | Պատմության և մշակութային հուշարձաններ..... | 45 |
| 6.11. | Անտառային ռեսուրսներ | 46 |
| 6.12. | Սոցիալ-տնտեսական բնութագիր..... | 46 |
| 6.13. | Հողերի տնտեսական յուրացման բնութագիր..... | 49 |
| 7. | ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ | 50 |
| 7.1 | Ջարդիչ կայան..... | 50 |
| 7.1.1. | Նախագծվող շինությունների համառոտ նկարագիրը | 51 |
| 7.1.2. | Թրթռաքարմաղ (ZENITH MINERAL) | 53 |
| 7.2. | Օգտագործվող հումքը, արտադրողականությունը | 54 |
| 7.3 | Ջրամատակարարում և ջրահեռացում | 56 |
| 8. | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... | 59 |
| 8.1 | Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա..... | 59 |
| | <i>Ռելիեֆի գործակցի հաշվարկ</i> | 64 |
| 8.2. | Հողային ծածկույթի վրա ազդեցություն | 66 |
| 8.3. | Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող թափոնների բնութագիրը | 66 |

| | | |
|------|---|----|
| 8.4. | Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա | 70 |
| 8.5. | Սոցիալական ազդեցությունը..... | 70 |
| 8.6. | Կունուլյատիվ (հավաքական) ազդեցություն | 72 |
| 8.7. | Աղմուկ..... | 72 |
| 9. | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՅՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ..... | 74 |
| 10. | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | 75 |
| 11. | ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ | 79 |
| 12. | ՄՈՆԻԹՐՈՒՆԳԻ ՊԼԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ | 80 |
| | ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... | 85 |

1. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը կազմված է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՕ-150-Ն օրենքի (խմբ. 03.05.23թ, ՀՕ-150-Ն) պահանջների հիման վրա:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում օգտագործվել են հետևյալ հիմնական հասկացությունները, սահմանումները և եզրույթները /տերմիններ/, որոնք բերվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքից և այլ նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության գործոնների, նյութերի, երևույթների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

նախատեսվող գործունեություն՝ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

նախաձեռնող՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր

շահագրգիռ հանրություն՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

գործընթացի մասնակիցներ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական և իրավաբանական անձինք, ներառյալ ազդակիր համայնք, ազդակիր բնակավայր, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների կամ փորձաքննության գործընթացին.

բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող

միջոցառումները, դրանց իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը բնութագրող փաստաթուղթ:

շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիթորինգի) ծրագիր՝ 2 շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն:

շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց:

փորձաքննություն՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագծի և ՌԷԳ հաշվետվության կամ նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության ուսումնասիրության, գնահատման և վերլուծության արդյունքով հիմնադրույթային փաստաթղթի նախագծին և ՌԷԳ հաշվետվությանը համապատասխան կամ նախագծային փաստաթղթին և ՇՄԱԳ հաշվետվությանը համապատասխան նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական կամ բացասական պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց:

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական:

Օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Բնապահպանական միջոցառումների ծրագիր՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման/կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ

Քույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Սույն ՇՄԱԳ-ով գործունեություն իրականացնող, նախատեսվող գործունեության նախաձեռնող է հանդիսանում «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ն, ով հանդիսանում է ընդերքօգտագործող և որի կողմից Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում ներկայումս ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրում իրականացնում է բազալտի արդյունահանում: ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի շահագործման համար 14.09.2021թ. ընկերությունը ստացել է ԲՓ 0172-21 դրական փորձաքննական եզրակացությունը:

Ընկերությունը նախատեսում է գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ տարածքում կառուցել նոր սարքավորումներով և տեխնոլոգիական բնութագրով բազալտե կոպճի արտադրամաս, որտեղ նախատեսվում է վերամշակել հանքավայրից արդյունահանվող բազալտի հումքը, ընդերքօգտագործման և արտադրական թափոններ, ինչպես նաև շինարարական թափոններ: Նոր արտադրամասը կապահովի աշխատանքի բարձր արդյունավետություն և բնառեսուրսների խնայողություն: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը մշակվել է ՋՏԿ-ի արտադրամասի կազմակերպման համար:

Քանի որ ջարդիչ կայանքը նախատեսված է հանքավայրի հանքաքարի, ընդերքօգտագործման և արտադրական թափոնների վերամշակման համար և գտնվում է հանքավայրի տարածքում, հաշվետվությունում դրանք ներկայացվել են համատեղ՝ որպես հանքարդյունահանման համալիր:

Հաշվետվությունում ներկայացված է Արամուսի բազալտի հանքավայրի տարածքում բազալտե կոպճի արտադրամաս տեղամասում ջարդիչ տեսակավորող կայանքի /ՋՏԿ/ աշխատանքների նկարագրությունը, տարածաշրջանի բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքը և տեխնիկական միջոցները, դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի տարածքում Ջարդիչ տեսակավորող կայանքի /ՋՏԿ/ շահագործման աշխատանքների կատարման շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից

պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3)

Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ Կառավարության N 1396-Ն որոշում /Ընդունված 08.09.20112./ Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով սահմանվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N 1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N 342-Ն հրաման, որով հաստատվել է այստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները,
- ՀՀ կառավարության 17 օգոստոսի 2017 թվականի N 990-Ն որոշում, որով հաստատվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը սահմանելու մասին պահանջները,
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ կառավարության 11 նոյեմբերի 2021 թվականի N 1848-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը հաստատելու մասին պահանջները,

– ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

Համաձայն «Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. Ենթակետի՝ «ընդերքօգտագործման բնագավառում ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում կամ հանքանյութի վերամշակում՝ օրական 30 խմ և ավելի» նախատեսվող գործունեությունը ենթակա է գնահատման և փորձաքննության որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանում Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Նախատեսվող գործունեությունը համաձայն «Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. Ենթակետի՝ «ընդերքօգտագործման բնագավառում ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում կամ հանքանյութի վերամշակում՝ օրական 30 խմ և ավելի» ենթակա է գնահատման և փորձաքննության որպես «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ: Սույն ՇՄԱԳ-ը մշակվել է փորձաքննական եզրակացություն ստանալու համար:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ն իրականացվել է ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից, որը հանդիսանում է որպես Օրենքով սահմանված նախաձեռնող:

Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: ՇՄԱԳ-ը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

Գնահատումն իրականացնելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ ազդակիր համայնքի ղեկավարների, շահագրգիռ հանրության ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները:

Որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներն են՝

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը:

- 2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.
- 3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով
- 4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.
- 6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.
- 7) բնապահպանական կառավարման պլանը.
- 8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.
- 9) նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը և այլն:
 ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի ինչպես բնապահպանական այնպես էլ սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:
 Նախաձեռնողի կողմից կազմված ՇՄԱԳ հաշվետվությունը պետք է ներկայացվի շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննության:

Նախաձեռնողի տվյալները՝

«ԱՐՔԱՐԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /ՍՊԸ/ գրանցվել է 2018 թվականին /ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, գրանցման համարը՝ 42.110.1032197, առ 13.08.2018թ./: Իրավաբանական հասցե՝ ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ. / Շ / 31 / 2 ԲՆ. ԿԵՆՏՐՈՆ 0019 ԵՐԵՎԱՆ Գործունեության հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գյուղ Արամուս, Տիգրանաձորի խճուղի, 3-րդ նրբանցք, 13 հողամաս /07-013-0161-0110/, Արամուսի բազալտների հանքավայրի տարածք:

Գործունեության համար հիմք է հանդիսացել Աբովյան համայնքի ղեկավարի կողմից 21.10.2024 տրված թիվ ՆԹ-1125-27 նախագծման թույլտվությունը:

Արամուսի բազալտների հանքավայրի պաշարները 547,2 հազ.մ³ ծավալով հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 29.09.1971թ.-ի N 6341 արձանագրությամբ՝ 1971 թվականի հունվարի 1-ի դրությամբ:

Բազալտներն իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-69 ԳՈՍՏ-ի և «Շինարարական քարեր տուֆերից,


բազալտներից և տրավերտիններից» 100-62 ՀՍ-ի պահանջներին: Արդյունահանման թափոններն օգտագործվում են որպես շինարարական խիճ:


Արամուսի բազալտների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում և տեղակայված է Արամուս և Կամարիս գյուղերի միջև: Արամուսի բազալտների հանքավայրի տարածքը տեղակայված է 1538.0-1550մ բացարձակ բարձրությունների վրա:

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ին պատկանող տարածքը զբաղեցնում է 6.78 հա մակերես: Տեղամասը հողաձածկ է և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արամուս, Զովք, Ձորաղբյուր և Կամարիս գյուղերի, Աբովյան և Երևան քաղաքների հետ: Հայկական երկաթուղու Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից 6.0 կմ հեռավորության վրա:

Հանքավայրի մոտակա բնակավայրերն են՝ Արամուսը, որը գտնվում է հանքավայրից մոտ 1,4 կմ հյուսիս, Կամարիսը՝ 2.2կմ հյուսիս-արևելք և Մայակովսկին՝ 2,6կմ հյուսիս-արևմուտք:







Կոտայքի մարզի քարտեզում «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ –ին տրամադրված տարածքի տեղադիրք

5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

5.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և ՀՀ Կոտայքի մարզի **Արամուսի բազալտների գործող հանքավայրի տարածքում** բազալտե կոպճի արտադրամասը /ՋՏԿ/ չի շահագործվում և հանքավայրում արդյունահանվող հումքը և թափոնները չեն վերամշակվում: Այս դեպքում հանքաքարի արդյունահանման և ջարդիչ կայանքի շահագործման բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա, կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա: Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն առաջանա:

- Տարածաշրջանի ենթակառուցվածքի բարելավում և օժանդակ սպասարկող ցանցի ընդլայնում և շինարարական արդյունաբերության բնագավառում շինանյութերի արտադրություն չի լինի:

5.2. Քննարկվող տարբերակներ

Քանի որ նախատեսվող գործունեության նպատակը հանքավայրում արդյունահանվող հումքի վերամշակումն է, դիտարկվել է հանքաքարի և թափոնների վերամշակման հետ կապված ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Երբ պայմանագիր է կնքվում մոտակա ջարդիչ կայանի հետ և հանքաքարի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը կատարվում է այլ վայրում: Այս տարբերակի առավելություններն են.

- **Կարիք չի առաջանա կատարել կապիտալ ներդրումներ**
- **Չի պահանջվի կատարել արտադրամասի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ:**

Տարբերակի թերությունները՝

- Մեծածավալ տրանսպորտային տեղափոխումներ, որոնց ընթացքում.
- կապահանջվեն զգալի ֆինանսական միջոցներ
- կառաջանան դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ
- կառաջանան փոշու արտանետումներ
- կինտենսիվանա ճանապարհային երթևեկությունը
- կլինի որոշակի կախվածություն գործընկեր կազմակերպության առաջարկվող պայմաններից:

Բ. Կառուցվում է սեփական ջարդիչ կայանք:

Այս տարբերակի առավելություններն են.

- Էականորեն նվազում են տրանսպորտային ծախսերը
- հնարավոր է կարգավորել և վերահսկել հանքաքարի վերամշակման արդյունավետությունը:

Տարբերակի թերությունները՝

- Կապիտալ ներդրումների անհրաժեշտություն
- կայանի սպասարկման ծախսեր
- փոշու արտանետումներ:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, ինչպես նաև ֆինանսատնտեսական և բնապահպանական հիմնավորումները, ընտրվել է երկրորդ տարբերակը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

6.1 Ընդհանուր տեղեկություններ տեղանքի մասին

Արամուսի բազալտների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի ենթաշրջանում, տեղակայված է Արամուս և Կամարիս գյուղերի միջև: Ընկերությունը զբաղվում է օգտակար հանածոյի արդյունահանման և հանքանյութի վերամշակման աշխատանքներով:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով Ընկերությունը ՏԿԵ նախարարությունից ստացել է օգտակար հանածոյի շահագործման թույլտվություն և լեռնահատկացման ակտը, որով «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ –ին տրամադրվող տարածքը զբաղեցնում է 6.78 հա մակերես: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի արդյունահանման՝ 30400մ³ է:

Ընկերությունը նախատեսում է հանքավարի հարակից տարածքում կազմակերպել բազալտե կոպճի արտադրամաս և տեղադրել Ջարդիչ Տեսակավորող Կայան /ՋՏԿ/ բազալտի հումքի մանրացման, ընդերքօգտագործման և արտադրական թափոնների վերամշակման նպատակով: Ջարդիչի համար նախատեսված արտադրամասի տարածքը ծանրաբեռնված չէ կառույցներով և շենք-շինություններով: Գործունեությունը նախատեսվում է իրականացնել 07-013-0161-0110 կադաստրային ծածկագրով հողամասում որի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է: Նախատեսվող տարածքում նախկինում այլ աշխատանքներ իրականացված չեն եղել և տեղանքը ռելիեֆային փոփոխության չի ենթարկվել: Հարակից տարածքներում առկա են բազալտի արդյունահանման տեղամասեր:

Ընկերությունը, որպես ընդերքօգտագործող նախատեսում է ՋՏԿ-ում վերամշակել ներկայումս շահագործվող երկու հանքավայրերից արդյունահանվող բազալտի հումքը, արտադրական թափոնները և պայմանագրային հիմունքներով գնել այլ թափոններ և հումք, ներառյալ շինարարական թափոնները: Արտադրամասի առավելագույն տարեկան արտադրական ցուցանիշը 240 000մ³ է:

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 29.09.1971թ.-ի N 6341 արձանագրությամբ 1971թվականի հունվարի 1-ի դրությամբ, ըստ A, B և C₁ կարգերի համապատասխանաբար 498 հազ.մ³, 556հազ.մ³ և 944հազ.մ³ քանակություններով: ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ի հայցվող տեղամասի բացահանքի օտարման տարածքը կազմում է 6.78հա և նրա պաշարները կազմում է 577800մ³ մարվող պաշար, C₁ կարգերով:

Բլոկի ելքը լեռնային ապարներից կազմում է 22.3% և շինարարական քարի ելքը՝ 17.6%:

Բազալտները իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-69 ԳՈՍՏ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-62 ՀՍ-ի պահանջներին: Արդյունահանման թափոնները կարող են օգտագործվել որպես շինարարական խիճ:

Բազալտների քիմիական կազմը

| Բազալտների տարատեսակները | Պ ա ր ու ն ա կ ու թ յ ու ն ն ե ր ը , % % | | | | | | | | | | |
|--------------------------|--|------------------|--------------------------------|--------------------------------|------|------|-----------------|-------------------------------|-------------------|------------------|------|
| | SiO ₂ | TiO ₂ | Fe ₂ O ₃ | Al ₂ O ₃ | CaO | MgO | SO ₃ | P ₂ O ₅ | Na ₂ O | K ₂ O | ԿՇՊ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Նվազագույն | 50.05 | 1.19 | 8.48 | 16.84 | 8.21 | 5.41 | 0.10 | 0.12 | 3.67 | 1.50 | 0.27 |
| Առավելագույն | 51.12 | 1.58 | 10.09 | 17.88 | 9.27 | 5.95 | 0.10 | 0.45 | 4.23 | 1.91 | 0.47 |
| Միջինը | 50.63 | 1.32 | 9.47 | 17.48 | 8.86 | 5.75 | 0.1 | 0.31 | 3.98 | 1.65 | 0.40 |

Տեղամասի բազալտներն իրենց քիմիական կազմով բնութագրվում են գործնականում բավականին համասեռ քիմիական կազմով:

Բազալտների ֆիզիկամեխանիկական փորձարկումների տվյալները

| Ցուցանիշների անվանումը | չափման միավորը | միջինը |
|---------------------------------|--------------------|--------|
| 1 | 2 | 3 |
| Ծավալային զանգված | գ/սմ ³ | 2.66 |
| Տեսակարար զանգված | գ/սմ ³ | 2.90 |
| Ծակոտկենությունը | % | 7.90 |
| Ջարդելիություն | % | 1.07 |
| Փափկեցման գործակիցը | | 0.85 |
| Ամրության սահմանը չոր վիճակում | կգ/սմ ² | 926 |
| Ամրությունը ջրհագեցած վիճակում | կգ/սմ ² | 813 |
| 35 ցիկլ սառեցումից և տաքացումից | կգ/սմ ² | 712 |

Տեղամասի բազալտներն իրենց ճառագայթափոխանակ հատկություններով բավարարում են HP5-96 նորմատիվ փաստաթղթի պահանջները և կարող են օգտագործվել տարբեր տեսակի շինարարական աշխատանքներում առանց սահմանափակման:

Երկրաբանահետախուզական աշխատանքներին զուգընթաց կատարվել են հիդրոերկրաբանական դիտարկումներ, որոնցով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում, ինչպես նաև՝ Արամուսի հանքավայրի այլ տեղամասերի շահագործվող բացահանքերում, որը բացատրվում է հանքավայրը կազմող ապարների ճեղքավորվածությամբ և ջրաթափանցելիությամբ: Տեղամասի տարածքը գործնականում ջրազուրկ է, ստորերկրյա ջրերի հորիզոններ և ելքեր (աղբյուրներ) հայտնաբերված չեն, ջրհեղեղային հոսքեր չեն արձանագրվել:

Մակաբացման ապարները հանքավայրի տարածքում ներկայացված են փխրուն-բեկորային դելյուվիալ առաջացումներով և հողմահարված, ճեղքավորված բազալտներով (փուշտա): Օգտակար հանածոյի առավելագույն հետախուզված հզորությունը Արամուսի հանքավայրում՝ 17.17մ է:

Հատկացվող տեղամասում (6.78 հա տարածքում) բազալտների միջին հզորությանը 8.52մ է, իսկ մակաբացման ապարների հզորությունը՝ 0.87մ:

Շահագործվող բացահանքի պարամետրերն են՝

- Ամենամեծ երկարությունը – 485մ
- Ամենամեծ լայնությունը – 245մ
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 12.5մ
- Մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.87մ
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 577.8հազ.մ³
- Արդյունահանվող պաշարների քանակը՝ – 547.2հազ.մ³
- Մակաբացման ապարների քանակը – 59.3հազ.մ³

Հանքավայրը ծածկող ապարներն են մակաբացման ապարները, ընդհանուր քանակը բացահանքում կազմում է 59300մ³, որն իրենից ներկայացնում է 1800մ³ ծավալով հողաբուսական շերտ, 21700մ³ ծավալով այլովիալ դեյուովիալ նստվածքներ և 35800մ³ հողմնահարված, ջարդոտված բազալտներ: Ժամանակակից առաջացումների և ջարդոտված, հողմնահարված բազալտների միջին հզորությունը կազմում է համապատասխանաբար 0.32մ և 0.55մ: Մակաբացման ապարները տեղավորվել են ժամանակավոր ներքին N1 լցակույտի ձևով՝ այնուհետև ավտոինքնաթափով տեղափոխվելու են արդյունահանված տարածք՝ 1540մ բարձրության հորիզոն: Հողաբուսական շերտի N2-լցակույտը N1 հողմնահարված, ջարդոտված բազալտների լցակույտի հարևանությամբ է: Հետագայում, հնարավորություն ստեղծվելուց հետո, այսինքն տվյալ հանքաստիճանը կամ նրա մի մասը մինչև հատակը շահագործվելու դեպքերում՝ շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները տվյալ տարածքին անհրաժեշտ քանակությամբ՝ 1.0մ բարձրությամբ կլցվեն բացված հատակների վրա և կհարթեցվի, կկատարվի ներքին լցակույտաառաջացում: Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել T-130 բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ³/հերթ է:

Հետախուզված տեղամասի տարածքում կարստեր, սողանքներ և այլ բնույթի գեոդինամիկ երևույթներ, որոնք կարող են բարդացնել շահագործման աշխատանքները, չեն արձանագրվել:

Տարեկան արդյունահանվող ոչ մեծ ծավալները ենթադրում են բացահանքի տեխնիկական և խմելու ջրի ոչ մեծ պահանջները: Տեխնիկական ջրի աղբյուր կարող է հանդիսանալ Կոտայքի ոռոգման ջրանցքը, որն անցնում է հանքավայրից մոտ 0.5-1կմ հյուսիս-արևելք: Ջրամատակարարման համար պայմանագիր կկնքվի Կոտայքի ոռոգման ջրանցքը շահագործող կազմակերպության հետ: Կամ որպես այլընտրանք կդիտարկվի նաև ցիստեռներով ջրի բերումը՝ պայմանագրային հիմունքներով , գնելով այն: Խմելու ջրի պահանջարկը արտադրամասում ապահովվելու է Արամուս գյուղի ջրամատակարարման ցանցից պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրը ներկայումս մշակվում է բաց եղանակով տարեկան՝ 32100մ³ արտադրողականությամբ /մարվող պաշար/:

Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացվում են մեխանիկական եղանակով նախնական փխրեցմամբ՝ LIEBHERR R942 HD SL էքսկավատորի հենքի

6.2 Շրջանի աշխարհագրական բնութագիրը և ռելիեֆը

Արամուսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի տարածքում և տեղակայված է Արամուս և Կամարիս գյուղի հարևանությամբ՝ 1500-1600մ բացարձակ բարձրությունների վրա: Մոտակա երկաթուղային Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից մոտ 6կմ հյուսիս-արևմուտք: Հանքավայրի մոտակա բնակավայրերն են՝ Արամուս համայնքը, որը գտնվում է հանքից 1,4 կմ հյուսիս, Կամարիս համայնքը՝ հանքից 2.4կմ հյուսիս-արևելք և Մայակովսկի համայնքը՝ 2,6կմ հյուսիս-արևմուտք:

Տեղամասը հողածածկ է և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է Արամուս, Ջովք, Ձորաղբյուր և Կամարիս գյուղերի, Աբովյան և Երևան քաղաքների հետ:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին, որը հյուսիս-արևելքում եզրավորում է Գեղամա լեռներով (լ. Աժդահակ, 3598մ) և Ողջաբերդի լեռնաբազուկով, հյուսիսում՝ Հատիս (2528մ) և Գութանասար (2299մ) լեռնազանգվածներով, իսկ հարավում՝ Նորքի սարավանդով: Տարածաշրջանի ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են հրաբխային խարամային կոները: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8⁰-ից չեն անցնում և համեմատաբար մատչելի են տնտեսական յուրացման համար:

Կլիման փոխվում է ըստ բարձրության՝ տաք-չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10⁰C-ից մինչև 25⁰C (Աժդահակի գագաթին): Հունվարի միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում -4.5-5.0⁰C է, բարձրադիր վայրերում՝ -13.6⁰C է, հուլիսինը՝ համապատասխանաբար +22.2⁰C և +8.7⁰C:

Տարեկան տեղումների միջին քանակը 400-800մմ է:

Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն լանդշաֆտները, բարձրադիր մասերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը:

Կենդանական աշխարհին բնորոշ են լեռնատափաստանային կենդանիները՝ գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, գորշուկ և այլն:

Տարածաշրջանը հանրապետության ինդուստրիալ-ագրարային զարգացած շրջաններից է՝ զարգացած արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ: Ներկայումս գործում են «Շողակն», «Արզնի», «Կոտայք», «Բջնի» շինանյութերի արդյունահանման մի շարք ձեռնարկություններ, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասեր, թռչնաբուծական ֆաբրիկա:

Հանքային հարստություններից արդյունաբերական նշանակություն ունեն Աբովյանի երկաթի հանքավայրը, քարաղի և շինանյութերի (պեռլիտ, բազալտ, անդեզիտաբազալտ, անդեզիտ, տուֆ) հանքավայրերը:

Նախատեսվող բազալտի կոպճի արտադրամասը զբաղեցնում է 0.8 հա մակերես, հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման: Տարածքի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

Y=8471047.979 X=4455538.264

Y=8470971.622 X=4455484.495

Y=8471035.562 X=4455410.152

Y=8471100.015 X=4455498.900

6.3 Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը

Արամուսի հանքավայրի բազալտների հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին, տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում:

Տեղամասի շրջանում սարավանդի ռելիեֆը հարթ է, գոգավոր և զուրկ է անտառային ծածկոցից: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին միոցենի նստվածքային, վերին պլիոցենի հրաբխային և ժամանակակից դելյուվիալ առաջացումները: Տեղամասի երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից վերև):

Միջին միոցեն (Ջրվեժի գիպսաաղաբեր շերտախումբ): Տեղամասի տարածքի ամենահին ապարները ներկայացված են այս հասակի հեմոգեն-տերիգեն նստվածքային առաջացումներով՝ կանաչավուն, դեղնականաչավուն գիպսատար կավեր, մերգելներ և այլն: Շերտախմբի առաստաղն անհարթ, հողմահարված և լվացված է: Մերձերևանյան շրջանում այս գիպսատար ապարների հզորությունը մոտ 300մ է: Կտրվածքի վերին մասում գիպսատար կավերն ունեն կարմրավուն երանգ և պարունակում են բազալտների բեկորներ: Այդ երևույթները պայմանավորված են հրահեղուկ լավայի ազդեցությամբ:

Վերին պլիոցեն: Հետախուզված տեղամասի օգտակար հաստվածքը ներկայացված է այս հասակի դոլերիտային բազալտներով, որոնք տարածաշրջանում մեծ տարածում ունեն և գրեթե ամենուրեք տրանսգրեսիվորեն (անկյունային և ազիմուտային աններդաշնակությամբ) տեղադրված են միջին միոցենի գիպսաաղաբեր շերտախմբի վրա, հարթեցնելով վերջինիս առաստաղի ռելիեֆի բացասական ձևերը:

Բազալտների օգտակար հաստվածքի հզորությունը Արամուսի բազալտի հանքավայրում տատանվում է 2.7մ-15.3մ սահմաններում, կազմելով միջինը՝ 9.1մ, մակաբացման ապարների հզորությունը միջինը՝ 0.95մ:

Բազալտների հաստվածքի մերձհատակային մասը ներկայացված է խարամացված, խոռոչավոր, ուժեղ ճեղքավորված տարատեսակներով, որոնց հզորությունը հասնում է

մինչև 2.1մ-ի: Խարամացված բազալտների առկայությունը բացատրվում է լավայի արագ սառեցման և քարացման պայմաններով:

Բազալտների հաստվածքի վերին հատվածում ապարները հողմահարված են, ճեղքավորված, ջարդոտված: Հանքավայրի բազալտները մանրահատիկ են, միատարր, պորֆիրային կամ միկրոդոլերիտային ստրուկտուրայով: Ապարի միներալոգիական կազմում մասնակցում են պլագիոկլազը, պիրոքսենը, օլիվինը և մագնետիտը:

Ժամանակակից այլովիալ-դեյյովիալ առաջացումները (99մ միջին հզորությամբ) առաջացնում են համատարած ծածկոց և ներկայացված են դեյյովիալ նստվածքներով: Դեյյովիալ նստվածքները ներկայացված են ավազակավային նյութով թույլ կապակցված փոխր-բեկորային ավազախճային, խճաբեկորային առաջացումներով:



Համաձայն «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» հրահանգի հանձնարարականների, Արամուսի բազալտների հանքավայրն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է 1-ին խմբին:

6.4 Ռելիեֆ, երկրաձևաբանություն


Արամուսի բազալտների հանքավայրը երկրաձևաբանական տեսակետից տեղադրված է Կոտայքի (Քանաքեռի) հրաբխային սարահարթի կենտրոնական մասում, որը բլրային ռելիեֆով տարածք է՝ կտրտված բազմաթիվ ձորակներով և սարավանդային խոր գետահովիտներով:

Կոտայքի սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բաժրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ :

Շրջանի լանջերի թեքության և լեռների երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները ներկայացված են ստորև նկար 3 և 4-ում:



Նկար 3. Մակերևույթի գերակշռող թեքություններ




Նկար 4. Երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 0.4g կամ 400սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 5):

Ստորև բերվում է սեյսմիկ գոտիների քարտեզը՝

Գծապատկեր 1



Սեյսմիկ շրջանցում Նկար 6




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Սողանքներ
-  Խոշոր սողանքային տարածքներ
- Հողմահարման գոտիներ*
-  Ջերմաքիմիական
-  Ջերմակենսաքիմիական
-  Ջերմասառնամանիքային
-  Նեոտեկտոնական բարձրացումների հավասարագծեր (կմ)
-  Տեկտոնական խախտումներ

Համաձայն արտակարգ իրավիճակների նախարարության ՀՀ սողանքային աղետի կառավարման ծրագրի ավարտական հաշվետվության հայցվող տարածքի շրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքերը ներկայացված են նկար 6-ում: Սողանքային մարմիններ հայցվող տեղամասի կամ հարակից տարածքում չի արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինը տեղամասից գտնվում է 4,5 կմ հեռավորության վրա:

6.5 Կլիմա և օդային ավազան

Տարածաշրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող կլիմայական գոտու մեջ: Նախատեսվող գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են՝ «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024»



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

(https://www.arlis.am/Annexes/7/2024_N03hav.pdf) նորացված նորմատիվային փաստաթղթում առկա «Եղվարդ» օդերևութաբանական կայանի կլիմայական տարրերի արժեքներով (օդի միջին ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավություն, մթնոլորտային տեղումներ, ձնածածկույթ, քամի) որոնք բերված են ստորև:

Տեղի կլիմայական պայմանները

Կլիմայական տեսակետից տեղամասի շրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Առաջին ձյունը տեղում է դեկտեմբերի վերջին տասնօրյակին և մնում է մինչև մարտ: Քամիների գերակշռող ուղղությունը հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք է:

Օդի ջերմաստիճան

| | | | | | | | | | | | | | | | |
|--------|------|------|-----|-----|------|------|------|------|------|------|-----|------|-----|-------|------|
| Եղվարդ | -4.9 | -2.8 | 2.7 | 9.4 | 14.4 | 18.9 | 22.8 | 22.8 | 18.6 | 11.8 | 4.8 | -1.7 | 9.7 | -32.6 | 38.7 |
|--------|------|------|-----|-----|------|------|------|------|------|------|-----|------|-----|-------|------|

Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

| | | | | | | | | | | | | | | |
|--------|-------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
| Եղվարդ | մ. ա. | 0.1 | 2.3 | 7.9 | 15.3 | 20.6 | 26.0 | 30.0 | 30.3 | 25.5 | 18.0 | 10.1 | 3.0 | 15.8 |
| | մ. ն. | -8.6 | -7.1 | -1.4 | 4.6 | 9.2 | 13.3 | 17.3 | 17.3 | 13.1 | 7.1 | 0.7 | -4.6 | 5.1 |

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

| | | | | | | | | | | | | | | |
|------------|---|-------|-------|-------|-------|------|------|------|------|------|------|-------|-------|-------|
| 12. Եղվարդ | ա | 13.1 | 16.0 | 22.2 | 28.5 | 29.8 | 36.5 | 38.3 | 38.7 | 35.4 | 30.2 | 21.5 | 17.4 | 38.7 |
| | ն | -32.6 | -25.3 | -21.0 | -13.4 | -3.0 | -0.2 | 5.3 | 6.1 | 0.1 | -6.7 | -18.6 | -25.0 | -32.6 |

Ձմռան սկիզբը, վերջը և տևողությունը

| | | | |
|------------|--------------|----------|----------|
| 1 | 2 | 3 | 4 |
| 12. Եղվարդ | 10 դեկտեմբեր | 2 մարտ | 83 |

Աղյուսակ 8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

| | | | | | | | | |
|-------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|
| Ամիս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Եղվարդ | | | | | | | | |
| 34. Հունիս | 18.7 | 28 | 4.0 | 18 | 0.1 | 2 | | |
| 35. Հուլիս | 28.7 | 31 | 15.5 | 31 | 2.3 | 14 | | |
| 36. Օգոստոս | 29.0 | 31 | 17.4 | 30 | 1.5 | 12 | | |

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

| | | | | | | | | | | | | | | |
|------------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|-----------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 12. Եղվարդ | ա.մ. | 5.9 | 8.1 | 15.2 | 22.1 | 26.5 | 31.4 | 34.8 | 34.7 | 31.3 | 24.5 | 16.3 | 9.3 | 35.6 |
| | ն. մ. | -16.9 | -15.3 | -9.9 | -2.2 | 3.1 | 7.6 | 11.8 | 12.4 | 6.9 | 0.4 | -6.1 | -12.8 | -18.7 |

ՕՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

| | | | | | | | | | | | | | | | | | |
|------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|
| 12. Եղվարդ | 75 | 71 | 65 | 61 | 60 | 53 | 49 | 47 | 49 | 59 | 70 | 76 | 61 | 75 | 66 | 49 | 34 |
|------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

| | | | | | | | | | | | | | | | |
|------------|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|----|-----|-----|-----|
| 12. Եղվարդ | 35 | 36 | 44 | 60 | 64 | 39 | 26 | 13 | 17 | 40 | 35 | 36 | 445 | 186 | 259 |
| | 30 | 31 | 42 | 40 | 42 | 29 | 53 | 45 | 35 | 39 | 37 | 28 | 53 | | |

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

| | | | | |
|------------|----|----|-----|----|
| 26. Եղվարդ | 68 | 74 | 156 | 79 |
|------------|----|----|-----|----|

Քամի

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
|------------|-----------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|-----|----|-----|-------|-----|-------|-----|
| 15. Եղվարդ | հունվար | 6 | 48 | 11 | 3 | 15 | 6 | 9 | 2 | 40 | 1.1 | ՀսԱրլ | 5.7 | ՀսԱրլ | 1.8 |
| | | 1.7 | 1.8 | 1.7 | 1.5 | 1.7 | 1.9 | 1.8 | 1.7 | | | | | | |
| | ապրիլ | 5 | 48 | 7 | 3 | 17 | 10 | 8 | 2 | 23 | 2.6 | | | | |
| | | 3.0 | 3.8 | 2.7 | 2.4 | 2.4 | 2.8 | 2.7 | 2.1 | | | | | | |
| | հուլիս | 6 | 73 | 4 | 1 | 7 | 4 | 4 | 1 | 11 | 4.8 | | | | |
| | | 4.9 | 5.5 | 4.9 | 1.7 | 3.0 | 2.5 | 3.0 | 1.8 | | | | | | |
| | հոկտեմբեր | 5 | 55 | 6 | 3 | 16 | 8 | 6 | 1 | 31 | 1.9 | | | | |
| | | 2.7 | 3.1 | 2.1 | 1.9 | 1.9 | 2.3 | 1.8 | 2.2 | | | | | | |

Քամու հաշվարկային արագությունը

| | | | | | | |
|------------|--------|-----|----|----|----|----|
| 12. Եղվարդ | 866. 0 | 2.6 | 62 | 24 | 27 | 29 |
|------------|--------|-----|----|----|----|----|

Ուժեղ քամիներով օրերի քանակը

| | | | | | | | | | | | | | |
|------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|------|-----|-----|-----|-----|----|
| 12. Եղվարդ | 0.6 | 1.2 | 2.7 | 3.2 | 3.5 | 7.7 | 16.6 | 16.1 | 7.8 | 1.7 | 0.7 | 0.3 | 62 |
|------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|------|-----|-----|-----|-----|----|

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր

| | | | | | | | | | | | | | | |
|------------|----|----|----|----|----|----|------|------|----|----|----|----|----|----|
| 12. Եղվարդ | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 12.7 | 22.9 | 28 | 29 | 30 | 30 | 31 | 32 |
|------------|----|----|----|----|----|----|------|------|----|----|----|----|----|----|

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր

| | | | | | | | | | | | | | | | |
|------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|
| 22. Եղվարդ | -21 | -19 | -19 | -18 | -17 | -16 | -3.1 | -5.8 | -30 | -29 | -27 | -25 | -22 | -20 | -33 |
|------------|-----|-----|-----|-----|-----|-----|------|------|-----|-----|-----|-----|-----|-----|-----|

6.6 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի կամ հարակից Արամուս, Մայակովսի, Բալահովիտ, Գետարգել բնակավայրերի տարածքում չկա: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից տարածքում մթնոլորտային օդի պարբերական մոնիթարինգ չի իրականացվում:

Մոտակա դիտակայանները գտնվում են մոտ 4-5կմ հեռավորությունների վրա, Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի տարածքում (նկար 8):

Օդային ավազան. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի

կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Նկար 8.

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, կառուցապատումը: Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայք էջի Արվյան համայնքի օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Ֆոնային աղտոտվածության ցուցանիշները ներկայացվել են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>) տեղադրված՝ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ուստի օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը/չնայած ժամկետայնությանը/ ներկայացվում է ըստ կայքի՝ ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» մինչև 10

հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Արամուս բնակավայրը մթնոլորտային օդի օդի ֆոնային աղտոտվածության ֆոնային ցուցանիշները ընդունվել են. փոշի՝ 0.071 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³, ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³ («ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի):

Գործունեության տարածքում 2024 թվականի գարնանը կատարվել է մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկում, ինչը հիմք է հանդիսանալու արտադրական գործընթացի ընթացքում մշտադիտարկումների իրականացման համար: Որոշվել են փոշու, ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները: Դրանք կազմել են փոշի՝ 0.1մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.001մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/մ³: Հարկ է նշել, որ հայցվող տարածքից մոտ գործող բացահանքերը կարող են որոշակի ազդեցություն ունենալ տարածքի մթնոլորտային օդի որակի վրա:

6.7 Հողային ռեսուրսներ

Հող, բնական գոյացություն՝ կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր: Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է:

ՀՀ տարածքի հողային ծածկույթը համեմատաբար երիտասարդ է: Այստեղ հողագոյացումը հիմնականում սկսվել է պլիոցենում և շարունակվել չորրորդական ժամանակաշրջանում:

Լեռնամարգագետնային հողերը զբաղեցնում են ՀՀ տարածքի 13,3%-ը (346 հզ.հա), մարգագետնատափաստայինը՝ 10,8%-ը (283հզ.հա), անտառային գորշը՝ 5%-ը (133հզ.հա), ճակարբոնատայինը՝ 0,6%-ը (15հզ.հա), անտառային դարչնագույնը՝ 21,6%-ը (564 հզ.հա), լեռնային սևահողերը՝ 27,5%-ը (718հզ.հա), մարգագետնասևահողայինը՝ 0,5%-ը (13 հզ.հա), լեռնային շագանակագույնը՝ 9, 2%-ը (242 հզ.հա), կիսաանապատային գորշը՝ 5,8%-ը (152հզ.հա), ոռոգելի մարգագետնային գորշը՝ 2.0%-ը (53 հզ.հա), պալեոհիդրոմորֆ կապկցված ալկալիացածը՝ 0,1%-ը (2,3 հզ.հա), գետահովտադարավանդայինը՝ 1,8%-ը (48 հզ.հա), հիդրոմորֆ աղուտ ալկալի՝ 1, 1% (29 հզ.հա), հողագրունտներ՝ 0, 7% (18հզ.հա):

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից

18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ: Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողերի ծավալային զանգվածը 1.35գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.13գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 36.4%, խոնավությունը՝ 27%-ի սահմաններում: Հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 17.4%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:


Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում՝ շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները:

Կախված ռելիեֆի պայմաններից և էոզոլիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՈՂԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ N 2.1.7.003-10 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N01-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ են իրականացվել նաև Կոտայքի մարզում: Ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի և արտադրամասի կազմակերպման շրջանում գերակշռում են լեռնատափաստանային լանդշաֆտը՝ կրազերցված սևահողային, բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած և լեռնաշագանակագույն՝ մնացորդային-կարբոնատային հողերով, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև նկար 9-ում:

Նկար 7. Հողերի բնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզ



Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Տեղամասի սահմաններում տարածված բաց-շագանակագույն մանրախճաքարքարոտ կարբոնատային-ցեմենտացված հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական

հատկություններով: **Աղյուսակ 9**

| Հողատիպը և ենթատիպը | Խորությունը, սմ | Տոկոսներով | | | Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում | pH-ը ջրային քաշվածքում |
|---------------------|-----------------|------------|-----------------|----------------------|---|------------------------|
| | | հումուս | CO ₂ | գիպս SO ₄ | | |
| Մուգ-շագանակագույն | 0-15 | 3.2 | 1.4 | 0.0 | 33.1 | 7.9 |
| | 15-34 | 2.1 | 7.3 | 0.0 | 31.5 | 8.4 |
| | 34-73 | 1.6 | 16.5 | 0.1 | 30.1 | 8.3 |
| | 73-105 | 1.0 | 15.7 | 0.1 | 29.7 | 8.3 |
| | 105-155 | 0.8 | 17.7 | 0.1 | 25.8 | 8.4 |
| | 0-25 | 2.4 | 4.4 | 0.0 | 29.4 | 8.1 |
| | 25-39 | 1.4 | 8.4 | 0.5 | 28.8 | 8.4 |

| | | | | | | |
|-----------------------|-------|-----|------|-----|------|-----|
| Բաց- շագանակագույն | 39-85 | 1.2 | 15.4 | 1.0 | 24.4 | 8.2 |
|-----------------------|-------|-----|------|-----|------|-----|

Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Տեղամասում նախնական դիտարկումների արդյունքում պարզվել է, որ հողաբուսաշերտը (որի հզորությունը կազմում է 10-15սմ և հանդիպում է տեղ-տեղ) ներկայացված է լեռնաշագանակագույն հողային զանգվածով՝ խոտաբույսերի արմատներով ու ավազակավերի կրազալտի կտորների խառնուրդով: ԶՏԿ-ի տեղադրման աշխատանքների իրականացման ընթացքում հողային շերտը հնարավոր չէ առանձնացնել հանվող լեռնային զանգվածից՝ մակաբացման ապարներից:

Հողամասի տարածքը ներկայացված է բաց-շագանակագույն մանրախճաքարային կարբոնատային-ցեմենտացված տարատեսակով: Հողերում հումուսի պարունակությունը կազմում է 1.8%, CO₂-ը՝ 7.2%, գիպսը՝ 0.25%, 100գ հողում կլանված կատիոնների գումարը՝ 29.1%, ջրային քաշվածքի pH-ը՝ 8.15: Հողերի ծավալային զանգվածը կազմում է 2.58գ/սմ³-ի: Հողաբուսական շերտի հզորությունը կազմում է մոտ 0.15մ:

2024 թվականի գարնանը կատարվել է տեղամասի տարածքի հողերի նմուշառում՝ ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունները ուսումնասիրելու նպատակով: Պարարտանյութերի, դրանց բաղկացուցիչ տարրերի, օրգանական այլ աղտոտիչների պարունակություններ չեն արձանագրվել: ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի N°01-Ն հրամանով սահմանված աղտոտիչներից հողերում արձանագրվել է 0.4մգ/կգ պղնձի և 2.1մգ/կգ ցինկի պարունակություններ:

Գործունեության տարածքի մակերեսը քարքարոտ է: Հարակից տարածքներում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Հայցվող տեղամասում նախկինում ընդերքօգտագործման հետևանքով խախտված/վերականգնված տարածքներ չեն արձանագրվել, հանված, կուտակված, պահեստավորված հողաբուսաշերտը բացակայում է:

6.8 Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ԶԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Քասախ: Հրազդանի ԶԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1մլն մ³ և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական

լճեր՝ Քարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը , Հանքավանի ջրամբարը: Այստեղ են գտնվում նաև 3032մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի և Ախպարայի ջրամբարները: Մարզը հարուստ է նաև քաղցրահամ ջրերի աղբյուրներով՝ Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով: Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից: Մոնիթորինգն իրականացվում է տարին 2 անգամ՝ 18 դիտակետերում՝ հիմնականում անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Տարածաշրջանի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ գարնանը,


հորդացումները՝ ամռանն ու աշնանը: Հրազդանի ԶԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2023 թվականի 3-րդ եռամսյակում կատարված հիդրոլոգիական դիտարկումների՝ Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում օգոստոսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Նկար 10

Հրազդան գետ հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 4կմ հեռավորության վրա: Տեղամասի տարածքում գետային ցանց չկա: Տեղամասից մոտ 1.6կմ հարավ հոսում է Գետատ գետը: Հայցվող տեղամասի շրջանում Հրազդան և Գետատ գետերի ջրերի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից չի իրականացվում: Հրազդան գետի ջրերի որակի մոնիթորինգի մոտակա №54 դիտակետը գտնվում է տեղամասից մոտ 6կմ հյուսիս-արևմուտք՝ Արզնի ՀԷԿ-ից 0.5կմ ներքև (նկար 16): 2023 թվականի նոյեմբերի ամսվա ընթացքում Հրազդան գետի ջրերի որակի մոնիթորինգի տվյալները ներկայացված են նկար 17-18-ի դիագրամներում (ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն » ՊՈԱԿ-ի պաշտոնական էջի) :

Նկար 11





Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ տեղամասի շրջանում շահագործվող հանքավայրերի տվյալների և կատարված դիտարկումների համաձայն՝ ստորերկրյա ջրերի հորիզոններ հայցվող տեղամասի շրջանում իսպառ բացակայում են: Դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում և շահագործական բացահանքերում, որը բացատրվում է հանքավայրերը կազմող ապարների ճեղքավորությամբ և ջրաթափանցելիությամբ: Չեն արձանագրվել նաև ջրհեղեղային հոսքեր:

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրից մոտ 0.5-1կմ հյուսիս-արևելք անցնում է Կոտայքի ջրանցքը: Այն սկիզբ է առնում Սևան-Հրազդան կասկադի Արգելի ջրէկի երրորդաստիճանի ջրաթեքումից (դերիվացիա): Շահագործման է հանձնվել 1962-ին: Ջրանցքի երկարությունը 43կմ է, ջրթողունակությունը՝ 6մ³/վ: Ոռոգում է Կոտայքի մարզի (8,3 հազ. հա) և Երևանի շրջակա (192 հա) հողատարածքները:

6.9. Կենսաբազմազություն

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Երևանի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Բուսականության հիմնական տիպը լեռնատափաստանն է: Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:



6.9.1 Բուսական աշխարհ

Ընդհանուր առմամբ տարածաշրջանում (Արամուս-Մայակովսկի-Բալախովիտ-Գետակգել գյուղերի հատված) ձևավորվել է տեխնածին, ընդերքօգտագործման աշխատաքներով խախտված, արտադրական հրապարակներով, լցակույտերով և ներհանքային ճանապարհներով զբաղեցրած լանդշաֆտ:



- | | |
|--|--|
| <p>Մարգագեղանարափառանային բուսականություն</p> <p>3 Մասնակցությամբ՝ <i>Festuca versicolor</i> Tausch, <i>F. ovina</i> L., <i>F. valesiaca</i> Gaudin, <i>Phleum pratense</i> L., <i>Hordeum violaceum</i> Boiss. et Huet, <i>Carex humilis</i> Leys, <i>Trifolium ambiguum</i> L.</p> <p>Անտառային բուսականություն</p> <p>5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ <i>Quercus macranthera</i> Fisch. et Mey. ex Hohen., <i>Q. boissieri</i> Best., <i>Q. araxina</i> (Trautv.) Grossh</p> <p>6 Անտառային խառը մշակարյույն, մասնակցությամբ՝ <i>Pinus pallasiensis</i> D. Don, <i>P. banksiana</i> Lamb., <i>Fraxinus excelsior</i> L., <i>Hippophae rhamnoides</i> L., սեռակներ <i>Salix</i>, <i>Acer</i>, <i>Ulmus</i> և սպիտակաշերտի ստորախոտերի</p> <p>Ջանրոջի մոտանարանային բուսականություն</p> <p>7 Գինո խառը, մասնակցությամբ՝ <i>Juniperus polycarpus</i> C. Koch, <i>J. oblonga</i> Boeb., <i>J. hemisphaerica</i> J. et C. Presl., <i>J. foetidissima</i> Willd., <i>J. Sabina</i> L., <i>Ephedra procera</i> Fisch. et Mey.</p> | <p>Տափաստանային բուսականություն</p> <p>9 Հալազգային, տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ <i>Festuca valesiaca</i> Gaudin, <i>F. ovina</i> L., <i>Koeleria albicoma</i> Domin, <i>K. cristata</i> (L.) Pers., <i>Bothriochloa ischaemum</i> (L.) Keng., <i>Stipa capillata</i> L., <i>S. lessingiana</i> Trin. et Rupe., <i>S. tirma</i> Stev., <i>Elytrigia trichophora</i> (Link) Nevsk., <i>Galium verum</i> L., սեռակներ <i>Agropyron</i>, <i>Andropogon</i>, <i>Scabiosa</i>, <i>Veronica</i>, <i>Artemisia</i>, <i>Achillea</i>, <i>Astragalus</i></p> <p>Կիսաանապատային բուսականություն</p> <p>11 Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ <i>Artemisia fragrans</i> Willd., <i>Kochia prostrata</i> (L.) Schrad., <i>Capparis spinosa</i> Willd., <i>Ceratoides papposa</i> Botsch. et Ikonn., <i>Atraphaxis spinosa</i> L., <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey., <i>Tanacetum argyrophyllum</i> (C. Koch) Tzvel., <i>Poa bulbosa</i> L., <i>Bromus</i>, <i>Aegilops</i>, <i>Eremopyrum</i>, <i>Alyssum</i>, <i>Aeluropus litoralis</i> (Gouan) Parl.</p> <p>● Հայզվող տեղամաս</p> |
|--|--|

Նկար

13

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային և կիսաանապատային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով: Աճում են օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia Prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum argyrophyllum* (C.Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.: Աճում են նաև լեռնատափաստանային տարախոտեր հացազգիների գերակշռությամբ՝ ողնախոտ(*Dactylis Woronovii*), սեզ տափաստանային (*Phleum phleoides*), դաշտավլուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), կելերիա սանրածն (*Koeleris cristata*), ցորնուկ ցգամազ (*Bromus squarrosus*), շուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*), մերձալպյան բարձրախոտերից՝ իշաովույտ նեապոլիտական (*Melilotus neapolitanus*), եղինջ երկտուն (*Urtica dioica*), ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն:

Կիսաանապատներին ամենաբնորոշ բուսատեսակն է օշինդրը: Օշինդր բուրավետն (*Artemisia fragrans*), որպես կանոն բնորոշ է չաղակալված շատ կարբոնատային, քարքարոտ մակերեսով, գորշ հողերին: Եթե անապատներին բնորոշ է հողաձածկույթի ոչ լրիվ ծածկումը, որը կապված է իսկական ճիմի բացակայության հետ, ապա այստեղ դիտվում են միայն ճիմագոյացման սկզբնաշրջանները: Գարնանը կիսաանապատների տարածքը սովորաբար ծածկվում է էֆեմերներով (*Ceratocephala falcata*, *Anisantha tectorum* և ուրիշներ): Այստեղ աճում են մանր ցորենազգիներ էֆեմեր ճիմի տեսքով (դաշտավլուկ, անապատահասկ, ցորնուկ, ծնկախոտ): Բուսածածկույթը, չնայած միջավայրի քսերոֆիտ պայմաններին, տարբերվում է տեսակային կազմի բազմազանությամբ: Օշինդրային անապատի հիմնական բաղադրիչն է՝ հոտավետ

օշինդրը: Դա ցածրահասակ կիսաթուփ է մինչև 50սմ բարձրության՝ փայտացած հիմքով: Լրիվ բուսածածկույթ չի գոյանում: Գարնանը և աշնանը օշինդրի թփերի մեջ աճում են էֆեմեր բույսեր՝ եղջուրագլխիկ, ջարդախոտ, գաղտրիկ, շնկոտեմ և այլն: Օշինդրային կիսաանապատներում օշինդրից բացի ինքնուրույն խմբեր է կազմում փշոտ կապարը (*Capparis spinosa*): Կապարային կիսաանապատներն առանձին խմբերով հանդիպում են քարքարոտ օշինդրային կիսաանապատների կավային լանջերին: Արարատյան հարթավայրի նախալեռներում հոտավետ օշինդրը բարձրանում է ծովի մակերևույթից բարձր մինչև 1300-1500մ, զբաղեցնում է Արագածի և Գեղամա լեռների մակրոլանջերը:

Ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի տարածքում դիտարկվել են ճոճուկը, դաշտային երինջակը, հոտավետ օշինդրը, դաշտավլուկը, կապարը, ուրց, անթառամը

Դիտարկվող տարածաշրջանում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է Կարմիր գրքերի նյութերի վերլուծություն (հիմք՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը <http://www.mnp.am> : Դիտարկվող տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեանման (*Acanthus dioscoridis* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում, տեղամասից ավելի քան 9կմ հեռավորության վրա,
- ձագախոտ էգինյան (*Erysimum eginense* Bornm.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Ջառ գյուղի մոտ, տեղամասից մոտ 8.5կմ հեռավորության վրա,
- գառնաովույտ լազիստանյան (*Oxytropis lazica* Boiss.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ, տեղամասից 13կմ հեռավորության վրա:

Տեղամասի տարածքում վերը նշված կարմիրքգրային տեղակների աճելավայրեր չեն արձանագրվել:

6.9.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Նկարագրվող լանդշաֆտային գոտում, որին բնորոշ է միջին բարձրության լեռնային տափաստանները, տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ:

Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:

Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրերի տարածաշրջանին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներն են լեռնային չոր տափաստաններում բնակվող Հայաստանում ամենուրեք տարածված սպիտակամկնիկը /*Crocidura*/, աղվեսը /*Vulpes*/, գերմանամուկը /*Cricetus auratus*/, դաշտամուկը /*Microtus arvalis* Pall/, կաքավը /*Perdis perdix* L./ և այլն:

Տեղամասի տարածքից մոտ 3կմ հեռավորության վրա՝ Բալահովիտ գյուղի մոտ գրանցվել են Մոմաբույսի մեղու (խոցելի տեսակ) և տափաստանային մկնաճուռակի բներ (վտանգված տեսակ):

Կաթնասունները առավել մեծ քանակությամբ ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախաճի կեռնեխ, լեռնային խաղտոտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դոդոշի (*Bufo viridis*):

Տեղամասի տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով խոշոր կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր արձանագրվել: Ֆիքսվել են դաշտամկան բազմաթիվ գետնափոր բներ :

Տարածաշրջանում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից տարածաշրջանում հատնի են.

- տոնական գնայուկ(*Poecilus festinus*), նեղ սևամարմին (*Laena constricta* Khnzorian) և հայկական սևամարմին (*Armenohelops armeniacus* Nabozhenko) – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,
- ալեքսանոր առագաստաթիթեռ (*Papilio alexanor orientalis* Romanoff) և ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina* Herrich-Schaffer) – խոցելի տեսակներ են, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,
- սիրիական սխտորագորտ (*Pelobates syriacus* Boettger)– խոցելի տեսակ, հանդիպում է Ջրվեժ, Առինջ, Ողջաբերդ գյուղերի շրջակայքում, տեղամասից 2.7- 7.7կմ հեռավորությունների վրա,
- երկարատու սցինկ (*Eumeces schneideri*) – խոցելի տեսակ, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,
- Կարելինի մռայլ արջաթիթեռ (*Axiopoena karelini* Ménétrés) – խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 3.5կմ հեռավորության վրա,

- Ասիական լայնականջ չոջիկ (*Barbastella leucomelas* Gretschmar) - խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 3.5կմ հեռավորության վրա,

- Անդրկովկասյան կապտաթիթեռ (*Plebejus transcasicus*) – վտանգված տեսակ, դիտարկվել է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա :

- Դիանա կապտաթիթեռ (*Neolysandra diana* (Miller, 1923)) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, տարածված է Կոտայքի մարզում՝ Գեղադիր, Ձորաղբյուր գյուղերի շրջակայք, Հատիս լեռ, հայցվող տարածքից համապատասխանաբար 9.8կմ, 4կմ և 8.5կմ հեռավորությունների վրա :

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված կենդանական տեսակները, կենդանիների միգրացիոն ուղիները ուսումնասիրվող տեղամասի սահմաններում չեն դիտարկվել, ինչը պայմանավորված է մարդու ազդեցության գոտում գտնվելու և տարածքում ընդերքօգտագործման աշխատանքներ իրականացնելու պատճառով:

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելավայրերը և ապրելավայրերը գտնվում են ուսումնասիրվող տեղամասի տարածքից զգալի հեռավորությունների վրա: Տեղամասում նախատեսվող, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով, ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որևէ կերպ չեն ազդի Կարմիր գրքում գրանցված տեսակների քանակի և արեալների կրճատման վրա:

6.9.3 Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Արտադրամասի կազմակերպման տարածաշրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ (արգելոց, ազգային պարկ, արգելավայր և այլն), որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Գործունեության կամ հարակից տարածքներն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունեն:

Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, Երևան-Գառնի մայրուղու աջակողմյան հատվածում՝1400մ բարձրության վրա գտնվում է «Ջրվեժ» անտառպարկը, սահմանակցում է Ողջաբերդ, Ջրվեժ համայնքներին և Երևան քաղաքին: Այն հիմնադրվել է 1977 թվականին՝ պետական անտառային ֆոնդի տարածքում և ունեցել է 400,43 հա մակերես: ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18 -ի N 684-Ն որոշմամբ հաստատվել են «Ջրվեժ» անտառպարկ տարածքի չափը և սահմանները՝ 423.8 հա:

Անտառապարկում աճում են «Կարմիր գրքում» գրանցված հազվագյուտ եւ անհետացող 21 տեսակի բույսեր՝ սոսի արեւելյան, գիհի բազմապտուղ, գիհի կազակական, նշենի սովորական, 100-ից ավելի ծառաթփատեսակներ և պարտեզային ձևեր՝ եղևնի կովկասյան, սոճի դրիմյան, խեժափիճի սիբիրական, թույա արևմտյան, 300 տեսակի անոթավոր բույսեր և այլն: Այստեղ աճում են բարձրարժեք գեղազարդիչ տեսակներ՝ եղևնի սովորական, եղևնի փշոտ, սոճի դրիմյան, գիհիների 5 տեսակներ, թույաների 3 տեսակներ 36 տեսակի վարդագգիների ընտանիքին պատկանող բույսեր և այլն:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Կոտայքի մարզում կան 33 բնության հուշարձաններ, որից 20-ը՝ երկրաբանական, 5-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական և 3-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ: Համաձայն նշված փաստաթղթի, ՀՀ Կոտայքի մարզում գտնվում են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 10.

| 7Հ | Բնության հուշարձանը | Գտնվելու վայրը |
|-----|--|--|
| 1 | 2 | 3 |
| 1. | «Անանուն» խզվածքներ | Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ |
| 2. | Թագավորացիկոտ խարամային կոնի կենձանների և խարամների կոնտակտ | Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ |
| 3. | «Թագավորանիստ» խարամային կոն | Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում |
| 4. | «Պեղիտե փիղ» քարե քանդակ | Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ |
| 5. | «Անանուն» բլուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ | Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում |
| 6. | «Օակ քար» բնական թունել | Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին |
| 7. | «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ | Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 8. | «Անանուն» քարայր սյունաձև բազալտներում | Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 9. | «Անանուն» լանջային էրոզիա | Ազատ գետի աջակողմյան ափերին |
| 10. | «Անանուն» լավային ծալքեր | Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 11. | «Անանուն» խորշեր | Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ |
| 12. | «Հատիս» հրաբուխ | Չովաշեն գյուղից 2.0 կմ արմ |
| 13. | «Ավազան» հրաբխային գմբեթ | Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ |
| 14. | «Կարենիս» հրաբխային գմբեթ | Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ |
| 15. | «Անանուն» ապարների բնորոշ մերկացում | Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև |

| | | |
|-----|--------------------------------------|---|
| 16. | «Անանուն» օբսիդիանի ելքեր | Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում |
| 17. | «Անանուն» քարե կուտակումներ | Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում |
| 18. | «Գուֆանասար» հրաբուխ | Ֆանտան գյուղից 3 կմ հվ |
| 1 | 2 | 3 |
| 19. | «Լեռնահովիտ» քարային կուտակումներ | Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեգխարաբ» գյուղատեղիի մոտ |
| 20. | Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա | գյուղ Ձորաղբյուր |
| 21. | «Հաղպրտանք» աղբյուր | Հրազդան քաղաքի Վանատուր (Աթաբեկյան) թանգարանի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա |
| 22. | «Համով» աղբյուր | Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| 23. | «Քաղցր» աղբյուր | Արգսի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա |
| 24. | «Ձորի» աղբյուր | Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա |
| 25. | «Ավազան» աղբյուր | Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| 26. | «Սագերի» լիճ | Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս |
| 27. | «Վիշապա» լիճ | Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ |
| 28. | «Բազմալիճք» լիճ | Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս |
| 29. | «Լուսնալիճ» լիճ | Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ |
| 30. | «Ողջաբերդ» բնապատմական համալիր | Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում |
| 31. | «Ռեյկտային կրկես Քյորոլլի լեռան մոտ» | Արտավազ գյուղի մոտ |
| 32. | «Ալայան գորգ» | Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում |
| 33. | «Թանթրվենի Տիգրանի» | Արգսի արողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա |

Արամուսի բազալտների հանքավայրի տարածքում և հարակից Արամուս, Մայակովսկի, Բալահովիտ և Գետարգել բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Բնության մոտակա հուշարձաններն են Ձորաղբյուրի բրածո ֆլորան և Հատիս հրաբուխը, որոնք գտնվում են երևակման տարածքից տարածքից մոտ 4.5կմ և 9.5 կմ հեռավորությունների վրա:

6.10 Պատմության և մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արամուս գյուղի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձաններ:

| Անվանումը | Ժամանակաշրջանը | Տեղադիրքը |
|--|------------------|---------------------------------------|
| 1 | 2 | 3 |
| ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՏԵՂԻ | Ք.ա. 2 հազ.-2 դ. | գյուղից 1 կմ հվ-ամ |
| Դամբարանադաշտ | Ք.ա. 2 հազ.-8 դ. | բլրալանջին |
| ԳԵՐԵԶՄԱՆՈՑ | 12-20 դդ. | գյուղի հվ-ատ մասում |
| հաչքար | 12-13 դդ. | |
| հաչքար | 12-13 դդ. | |
| հաչքար | 13-14 դդ. | |
| հաչքար | 16-17 դդ. | |
| հաչքար | 16-17 դդ. | |
| Տապանաքար | 15-16 դդ. | |
| ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 0.5 կմ հվ-ատ |
| ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 0.5 կմ ատ |
| ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՆՇԱՆ | 6 դ. | գյուղի մեջ |
| Բնակելի շինություններ | 19 դ. | եկեղեցու մոտ |
| հաչքար | 10-11 դդ. | եկեղեցու մոտ |
| հաչքար | 10-11 դդ. | |
| ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՀԱԿՈՐ | 1867 թ. | գյուղի կենտրոնում |
| հաչքար | 9-10 դդ. | հենած է եկեղեցու պատին |
| հաչքար | 13 դ. | ագուցված է եկեղեցու ատ ճակատին |
| հաչքար | 13-14 դդ. | ագուցված է եկեղեցու ատ ճակատին |
| հաչքար | 13-14 դդ. | ագուցված է եկեղեցու ամ ճակատին |
| հաչքար | 14-15 դդ. | ագուցված է եկեղեցու ամ ճակատին |
| հաչքար | 14-15 դդ. | ագուցված է եկեղեցու ամ ճակատին |
| հաչքար | 14-15 դդ. | խորանի ձախ կողմում |
| հաչքար | 15 դ. | ագուցված է եկեղեցու ատ ճակատին |
| հաչքար | 15-16 դդ. | |
| հաչքար | 1558 թ. | ագուցված է եկեղեցու ատ պատի հս մասում |
| հաչքար | 16-17 դդ. | ագուցված է եկեղեցու ատ պատի հս մասում |
| ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | 1972 թ. | գյուղի մեջ |

| | | |
|---|-----------|---------------------------------------|
| ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ | 13-14 դդ. | գյուղի հվ-աե մասում, բարձունքի վրա |
| Գերեզմանոց | 13-20 դդ. | |
| Խաչքար Գրիգոր քահանայի, կազմող՝ Վարդ | 1205 թ. | եկեղեցու հս ճակատի դիմաց |
| ՄԱՏՈՒՌ | 19 դ. | գյուղի կենտրոնում |
| ՄԱՏՈՒՌ | 19 դ. | գյուղի ամ կողմում |
| ՏԱՊԱՆԱՔԱՐ | 12-13 դդ. | գյուղի ամ կողմում |

Պատմության և մշակույթի հուշարձանների հողերի և Արամուսի բազալտի հանքավայրից հայցվող տեղամասի միջև հեռավորությունը տատանվում է 1.6-ից 1.9կմ սահմաններում: Քանի որ բազալտի արդյունահանումը կատարվելու են առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման, այն չի կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

6.11. Անտառային ռեսուրսներ

Տարածաշրջանի անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրաանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորաեղջր(*Quercus macranthera*), բոխի (*Carpinus betulus*), բոխու տեսակներ (*Aser campestre*, *Aser trautvetteri*), արոսենի (*Sorbus umbelata*) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (*Pyrus sp.*, *P. georgica*, *P.communis*) և խնձորենի (*Malus silvestres*): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսաճառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Արտադրական գործունեության կազմակերպման նպատակով Արամուս բնակավայրում նախատեսված տարածքում և հարակից՝ Մայակովսկի, Բալահովիտ և Գետարգել բնակավայրերում անտառային ֆոնդի հողեր, անտառապատ տարածքներ հաշվառված չեն, հետևաբար, նախատեսվող գործունեությունը անտառային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չեն ունենալու:

6.12. Սոցիալ-տնտեսական բնութագիր

Բազալտե կոպճի արտադրամասի տարածքը գտնվում է Արամուսի բազալտի հանքավայրի հարակից տարածքում, Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում՝ բնակավայրից 1.4 կմ հեռավորության վրա:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Մարզի տարածքը կազմում է 2086 քառ.կմ, որը ՀՀ տարածքի 7%-ն է: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին: Մարզն ընդգրկում է

երեք տարածաշրջաններ՝ Հրազդանի, Արվյանի և Նաիրիի: Համայնքների թիվը 67 է, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 74.1 %-ը (154584.3 հա), որոնք կազմում են Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 7.6%-ը: Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (51.1%) և վարելահողերը (24.4%), որոնք համապատասխանաբար կազմում են Հանրապետության արոտավայրերի 7.5%-ը և վարելահողերի 8.5%-ը:

Մարզի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 22907.5 հա կամ մարզի տարածքի 11.0 %-ը, որը Կոտայքի տարածքի համեմատ համարժեք է հանրապետության ցուցանիշին (11.2%): Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6 %-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Առկա են ոսկու, այլումինի, պղինձ- մոլիբդենի, երկաթի, պեռլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելինային սիենիտների, անդեզիտաբազալտների, հրաբխային խարամների, քարաղի, զանազան շինարարական նյութերի հանքավայրեր: Մարզում առկա են հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրեր՝ Բջնիի, Արզնիի և Հանքավանի, որոնք բուժական նպատակներով օգտագործելու մեծ հնարավորություններ ունեն: Նշված հանքավայրերից առաջին երկուսը շահագործվում են թերծանարաբեռնվածությամբ, իսկ Հանքավան հանքային ջրի նկատմամբ դեռևս հետաքրքրություն չկա:

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում, առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում:

Կոտայքի մարզի մշտական բնակչությունը կազմում է 253900 մարդ /2016թ. հունվարի 1-ի տվյալներով/, որից՝ քաղաքային՝ 137900 մարդ (54,3%), գյուղական՝

116000 մարդ (45.7%): Մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.5%-ը: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ:

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք: Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում

տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %:

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%: Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով:

Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, սահմանակից է 5 մարզերի և Երևան քաղաքի հետ, մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 50կմ է: Մարզով են անցնում Մ-4 Երևան- Սևան-Իջևան- Ադրբեջանի սահման և Բալախովիտ-Մասիս (Երևանը շրջանցող) միջպետական ճանապարհները (56.18կմ): Մարզի տարածքով են անցնում Երևան- Սևան-Շորժա (68կմ) և Հրազդան-Իջևան (20կմ) երկաթուղիները:

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը տնտեսությունում:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ ԱրմենՏել ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), Ղ-Տելեկոմ ՓԲԸ (Վիվասել/ՄՏՍ ապրանքանիշ) և ՅՈՒԲՈՄ (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են ԱրմենՏելը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստատալիք: Գործում է Կոտայք TV մարզային հեռուստաընկերությունը: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրազդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկածորի, Հանքավանի և Հրազդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը, որտեղ բնակվում են մարզի բնակչության 98,6%-ը: Գազաֆիկացված չեն Հանքավան, Սևաբերդ, Ողջաբերդ, Սարալանջ, Բուժական համայնքները, այս համայնքներում բնակվում են մարզի բնակչության 1,4%-ը: Նշված համայնքներից Հանքավան համայնքի գազաֆիկացումը կնպաստի Հանքավանի ջրամբարի հարակից և համայնքի տարածքներում առկա հանգստյան տների, առողջարանների կողմից առավել մատչելի էներգետիկ ռեսուրսի օգտագործման համար: Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է 1051 կմ:

6.13. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Բազալտե կոպճի արտադրամասի համար նախատեսված տարածքը գտնվում է Արամուսի բազալտի հանքավայրի հարակից տարածքում, որը գտնվում է Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում:

Արամուս գյուղը սահմանակից է արևմուտքից՝ Մայակովսկի, հյուսիսից՝ Ձորաղբյուր, հյուսիս-արևելքից՝ Զովք և Կամարիս, արևելքից՝ Կաթնաղբյուր, հարավ-արևելքից՝ Ակունք, հարավից՝ Նոր Գյուղ համայնքներին:

Արամուսի վարչական տարածքը կազմում է 1499,11հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1075,85հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 238,15հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 101,37հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 16,67հա, հատուկ պահպանվող տարածքները՝ 53,50հա, ջրային հողերը՝ 13,57հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 78հա: Համայնքի բնակչության 52% կազմում են տղամարդիկ և 48% կանայք: Գյուղում գործում են ալկոհոլային խմիչքների, սնկերի, սննդամթերքի, քարի մշակման, հանքարդյունահանման և արտադրական կազմակերպություններ: Անհատ ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ այլուրե հրուշակեղենի, մետաղապլաստե դռների ու լուսամուտների և այլ արտադրություններ: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է:

Գյուղում զարգացած է առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունը, անասնապահությունը, արտադրությունը, մատուցվող ծառայություններն ու առևտուրն է:

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ կողմից բազալտի արդյունահանման նպատակով շահագործվող հանքավայրի և արտադրամասի համար նախատեսված տարածքը ներկայացված է արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերով, որի գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման, գրանցման

իրավունքի տեսակը՝ վարձակալություն /պայմանագրի գործողության ժամկետը՝ 18 տարի/: Հողամասը գրառեցնում է 4.0032 հա մակերես, ծովի մակարդակից ունի առավելագույնը 1515 մետր բարձրություն, առավելագույնը՝ 1535մ: ՇՄԱԳ-ին կից ներկայացված փաստաթղթերում առկա են հողօգտագործման վկայականները և անշարժ գույքի միավորի որակական և քանակական բնութագրերը:

Նախատեսվող արտադրամասի վերաբերյալ տեխնոլոգիական լուծումները և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը ներկայացվել են Աբովյան համայնքի և Արամուս բնակավայրի բնակիչներին: ՇՄԱԳ հաշվետվությանը կից ներկայացվում են հանրային քննարկումների արձանագրությունը, լուսանկարները և տեսաձայնագրությունը:

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

7.1 Ջարդիչ կայան

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի տարածքում բազալտե կոպճի արտադրամասի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերը կազմվել են համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծային առաջադրանքի:

Նախատեսվող բազալտի կոպճի արտադրամասի հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման: ՋՏԿ-ն տեղակայված է «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ին /ծածկագիր/ 07-013-0161-0110 կադաստրային ծածկագրով վարձակալության իրավունքով պատկանող հողամասում գրառեցնում է 4.0032հա մակերես: Արտադրամասը գտնվում է Կոտայքի մարզի, Աբովյան համայնքի, Արամուս գյուղում: Բացահանքի հյուսիս-արևմտյան ուղղությամբ տեղադրված է ջարդիչ կայանք, որում Ընկերության կողմից կատարվում հանքաքարի մանրացում: Ընկերությունը նախատեսում է գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ տարածքում կառուցել նոր սարքավորումներով և տեխնոլոգիայով բազալտե կոպճի արտադրամաս, որտեղ նախատեսվում է վերամշակել հանքավայրից արդյունահանվող բազալտի հումքը, ընդերքօգտագործման և արտադրական թափոնները, ինչպես նաև նաև շինարարական թափոններ: Տարածքը հյուսիսից շրջափակված է խճային ճանապարհով, իսկ հարավից և արևմուտքից շահագործվող հանքավայրերով: Նախագծված շինությունը բաղկացած է քարե մամլիչից և օժանդակ շարժական էլեմենտներից:

Արտադրության տեխնոլոգիան բավականին պարզ է: Համաձայն նախագծային լուծումների նախատեսվում է իրականացնել՝

1. Քարի մանրացման արտադրասարքերի համար ե/բ հիմնատակ 19.70x2.20մ չափսերով
2. Ջրի բաք
3. Ցանկապատ:

Կառուցապատման տեխնիկոտնտեսական ցուցանիշներն են

- Հողամասի մակերես՝
- Կառուցապատման մակերես 250 քմ
- Ընդհանուր կառուցապատման մակերես 600 քմ,
- Բարեկարգման մակերես 400 քմ:

250 քմ մակերեսում նախատեսվում է իրականացնել կառուցապատում, որի բետոնային աշխատանքների համար անհրաժեշտ 270 խմ ծավալով բետոնը կբերվի պատրաստի վիճակում: Հողային աշխատանքների ծավալը կկազմի 330 խմ հանվող զանգված, որից 50 խմ-ը՝ որպես բերրի հողաշերտ կպահպանվի հատուկ միջոցառումներով, 80 խմ-ը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ մնացորդային զանգվածը Աբովյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կհեռացվի համապատասխան աղբավայր: Հողամասում բնակելի տարածքների ուղղությամբ և բարեկարգվող հատվածներում նախատեսված է կանաչապատման աշխատանքներ արագ աճող բարդու տեսակներով, որի համար կօգտագործվի պահեստավորված հողաշերտը:

7.1.1. Նախագծվող շինությունների համառոտ նկարագիրը

Հաստոցների հիմքերը ե/բ կոնստրուկցիաներ են՝ 19.70x2.20մ արտաքին չափսերով: Բոլոր շինությունների կրող կոնստրուկցիաները կարկասային են, խարամաբետոնե արտաքին պատերով: Նախագծվող շինությունը բաղկացած է քարե մամլիչից և օժանդակ շարժական էլեմենտներից:

Մանրացված քարի արտադրության տեխնոլոգիա

Մանրացված քարը շինարարական պրոցեսների մեջ ունի լայն կիրառություն: Հետևաբար, հետագա նախատեսվող շինարարության արդյունքները, որակը և ամրությունը, ինչպես նաև ճանապարհների որակը կախված են այս ունիվերսալ նյութի՝ խճի, որակից և որակի բնութագրերից: Սկզբունքորեն, արտադրության տեխնոլոգիան բավականին պարզ է՝ համեմատած այլ շինանյութերի արտադրության հետ:

Աշխատանքային պրոցեսը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում (ըստ տարբեր չափերի):

Արդյունահանված օգտակար հանածոն կամ վերամշակվող թափոնները բեռնատարներով տեղափոխվում է հումքի բաց պահեստ կամ խոշոր ջարդման ընդունիչ բունկեր: Պահեստից կամ բունկերից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման: Վերամշակվող հումքի ցածր խոնավության դեպքում փոխակրիչի սկզբնական մասում տալիս են 20լ/րոպե քանակությամբ ջուր, պահպանելով խոնավությունը 7-8% սահմաններում:

Քարմաղման արդյունքում ստանում են 4 դասի ֆրակցիաներ՝ - 5մմ և +5 -20 մմ , +20 - 25մմ և +25մմ խոշորությամբ:

+25մմ դասը ժապավենային փոխակրիչով տրվում են ջարդման 2-փուլ՝ ռոտորային ջարդիչում: Ռոտորային ջարդիչից հետո մանրացված քարը տրվում է քարմաղ, որի արդյունքում ստանում են տարբեր չափսերի խիճ:

Ավելի մանր ֆրակցիա ստանալու համար նախատեսված է երկրորդ ջարդիչը, որն աշխատում է նույն եղանակով:

Արտադրության փուլեր.

I-ին քայլ՝ վերամշակվող հումքը տեղափոխվում է հատուկ այդ նպատակով նախատեսված բունկեր, որը կարգավորում է առաջնային ջարդիչի մատակարարման աշխատանքը:

II-րդ քայլ՝ առաջնային ջարդիչից հետո ստացված հումքի տեղափոխումն է երկրորդային ջարդիչ՝ ավելի մանր ֆրակցիա ստանալու համար:

Մանրացված հումքի մշակման III-րդ փուլը ներառում է պատրաստի հումքի մատակարարում կամ պահեստավորում՝ ըստ ապրանքի տեսակի և չափերի:

Առաջին 3 ֆրակցիաները համարվում են պատրաստի արտադրանք և վաճառվում են կամ կուտակվում պատրաստի արտադրանքի բաց պահեստներում:

Խճաքարի չափսերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ:

Համաձայն տեխնոլոգիական սխեմայի երկրորդ փուլում տեղադրված քարմաղը կարող է կրել նաև ստուգողական քարմաղի դեր: Երբ մանր ֆրակցիաների պահանջարկը ավելանում է, երկրորդ քարմաղման վերին դասը վերադարձվում է ռոտորային ջարդիչ լրացարդման:

Արտադրամասում բոլոր սարքավորումները բացօդյա են օժանդակ սարքավորումները՝ շարժական: Համաձայն առաջադրված խնդիրների նոր սարքավորումների կառուցվածքները կարող են փոփոխվել: Խճաքարի չափսերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ:

Քարմաղման արդյունքում ստացած պատրաստի արտադրանքը /պատվեր եղած քանակությամբ/ կուտակվելու է արտադրական հրապարակում և տեղում վաճառվելու է սպառողներին:

Նախատեսվող գործունեության իրականացման համար ընկերությունը օգտագործելու է <<ZENITH MINERAL>> մակնիշի ջարդիչներ:

ZENITH MINERAL տիպի ջարդիչը՝ այս տեսակի մեխանիզմներից ամենահուսալիներից մեկն է և առավելությունը կայանում է վերջնական նյութի մասնիկների մեծությունը սահմանելու հնարավորության մեջ:

Ջարդիչը մանրացնող համակողմանի (ունիվերսալ) մեխանիզմ է, որը կիրառվում է ցանկացած ամրության ապարներ մանրացնելու համար: Մանրացումը կատարվում է երկու այտավոր ջարդիչների միջոցով՝ խոշոր և միջին, եզակի դեպքերում առավել մանր մասնիկավոր նյութերի մանրացման համար:

Ջարդիչի առանձնահատկություններից է նաև բարձր ամրության և հղկամաշունակության կավային նյութեր (ինչպես չոր, այնպես էլ խոնավ) մանրացնելու ունակությունը (սեղման ամրության սահմանը մինչև 2200 կգուժ/սմ²):

ZENITH MINERAL այտավոր ջարդիչի հիմնական տարրերն են՝ շրջանակ, մանրացնող վահաններ, շարժվող այտ, գլխավոր առանցք, փոկանիվ, արտակենտրոնակային լիսեռ, կարգավորիչ սալիկ, փակող զսպանակ, պաշտպանիչ պահանգ:
Ջարդիչի տեխնիկական պարամետրերը բերված են աղ.-ում

| | |
|----------------------------------|---------------------------|
| Ջարդիչի մոդել | ZENITH MINERAL |
| Տիպաչափս | 1200x1510 |
| Մասնիկի առավելագույն չափս | 300 մմ |
| Բեռնաթափման ճեղքի լայնություն | 40-90մմ |
| Արտադրողականություն | 150-200 մ ³ /ժ |
| Շարժիչի հզորություն | 200-250 կՎտ |
| Ջանգված | 21 տ |
| Եզրաչափերն առանց հաղորդակի LxBxH | 1.6x2.5x2.2 |

7.1.2. Թրթռաքարմաղ (ZENITH MINERAL)

Քաղմաղները կիրառվում են 2.0-63.0մմ բջջավոր ցանցերի վրա՝ 0-200.0մմ չափամասերով հատիկավոր նյութեր տեսակավորելու համար: Տեսակավորվող նյութ է համարվում քարը, ավազակոպճային խառնուրդը, հանքաքարը, և այլ նյութեր: Քարմաղների միջոցով նյութերը հնարավոր է տեսակավորել չոր և թաց տեսքով:

Քաղմաղը կատարում է չուղղորդված էլիպսաձև շարժումներ: Շարժումներն առաջացնում է թրթռաշարժիչը, որը գտնվում է ագրեգատի ծանրության կենտրոնի վերևում: Արտադրվում են մեկ, երկու կամ երեք տեսակավորման հարթություններ ունեցող քաղմաղներ: Տեսակավորման հարթությունները կարող են լինել պողպատյա, ռետինե կամ պլաստիկ:

թրթռաքարմաղի առավելությունները.

- կայուն են տեսակավորման հարթակում տեսակավորվող նյութի նկատմամբ
- պահանջում են նվազագույն շահագործման ծախսեր՝ ագրեգատի կառուցվածքի, քաղմաղի շահագործման փորձի և տարրերի /դետալների/ միասնականացման կիրառման շնորհիվ
- նվազագույն շահագործման ծախսեր, ինչը իրագործելի է ագրեգատի հավասարակշռված կառուցվածքի և քաղմաղի շահագործման երկարամյա արտադրական փորձի ու տարրերի /դետալների/ միասնականացման ներդրման հաշվին
- ապահովում են տեսակավորման հարթակների պարզ փոխարինում, դիտաապակիների միջոցով տեսակավորման գործընթացի և տեսակավորման հարթակների վիճակի պարզ տեսողական հսկողություն:
- թրթռաքաղմաղի որակական հատկանիշները ապահովում են բարձր արդյունավետություն ու խնայողականություն:

ZENITH MINERAL Բեռնափոխակրիչ (թրթռասնիչ՝ մաղելու գործառույթով)

Բեռնափոխակրիչը նախատեսված է սորուն նյութերի հորիզոնական փոխադրման համար, օժտված են խոշոր ներխառնուկները զատելու լրացուցիչ ֆունկցիայով: Բեռնափոխակրիչների տարբեր տեսակներ կիրառվում են որպես չոր նյութերի արտաձող /կողմնատար/ փոխակրիչներ, ինչպես նաև որպես հում նյութերի թրթռական սնուցիչ՝ չոր շինարարական խառնուրդների արտադրության կայանքներում և կատալիզատորների արտադրության մեջ:

Սարքավորումի լրակազմը հնարավոր է փոխել, լրացնել կամ փոփոխել՝ արտադրության նոր նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Թրթռափոխակրիչն իրենից ներկայացնում է թրթռամեկուսիչ հենարանների վրա ազատ տատանվող ռեզոնանսային համակարգ, որը բաղկացած է փոխադրող փակ ճոռից և վերջինիս վրա ամրացված էլեկտրամեխանիկական թրթռիչներից, որոնց թեքության անկյունը կարգավորվում է: Ճոռին ամրացված բաժանարար ցանցը կատարում է խոշոր ներխառնուկների առանձնացման դեր, որոնք դուրս են բերվում հատուկ արտաթողման խողովակաուստի միջոցով:

Թրթռաքաղմաղի որակական հատկանիշները ապահովում են բարձր արդյունավետություն ու խնայողականություն:

Բեռնափոխակրիչը նախատեսված է սորուն նյութերի հորիզոնական փոշեստվար փոխադրման համար, խոշոր ներխառնուկները զատելու լրացուցիչ ֆունկցիայով: Բեռնափոխակրիչների տարբեր տեսակներ կիրառվում են որպես չոր նյութերի արտաձող /կողմնատար/ փոխակրիչներ, ինչպես նաև որպես հում նյութերի թրթռական սնուցիչ՝ չոր շինարարական խառնուրդների արտադրության կայանքներում և կատալիզատորների արտադրության մեջ: Սարքավորումի լրակազմը հնարավոր է փոխել, լրացնել կամ փոփոխել՝ արտադրության նոր նպատակներին և խնդիրներին համապատասխան:

7.2. Օգտագործվող հումքը, արտադրողականությունը


Բացահանքի հյուսիս-արևմտյան ուղղությամբ տեղադրված է ջարդիչ կայանք, որում կատարվում հանքաքարի մանրացում: Ընկերությունը նախատեսում է գործող ջարդիչ տեսակավորող կայանի /ՋՏԿ/ տարածքում կառուցել նոր սարքավորումներով և տեխնոլոգիայով բազալտե կոպճի արտադրամաս, որտեղ նախատեսվում է վերամշակել հանքավայրից արդյունահանվող բազալտի հումքը, ընդերքօգտագործման և արտադրական թափոնները, ինչպես նաև նաև շինարարական թափոններ: Նոր արտադրամասը կապահովի աշխատանքի բարձր արդյունավետություն և բնառեսուրսների խնայողություն: Սույն ՇՄԱԳ հաշվետվությունը մշակվել է -ի ՋՏԿ արտադրամասի համար, ներառելով նաև Արամուսի բազալտների հանքավայրի ցուցանիշները:


Կայանքի առավելագույն արտադրողականությունը ըստ վերամշակվող հումքի կկազմի 240000մ³: Տարեկան աշխատանքային օրերի առավելագույն թիվը կկազմի՝ 260 օր, մեկ 8-ժամյա հերթափոխով:

Հաշվի առնելով հանքաքարի տեսակարար զանգվածը՝ 2.66 տ/մ³, տարեկան արտադրողականությունը կկազմի՝ 638400 տ/տարի: Օրական և ժամային առավելագույն

արտադրողականության ցուցանիշները կկազմեն՝ 638400տ/տարի: 260 օր/տարի = 2455,38 տ/օր կամ 306,9տ/ժամ:

Նշված ցուցանիշներով նախատեսվող գործունեությունը համաձայն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին Օրենքի /խմբագրված 2023թ/ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:





7.3 Ջրամատակարարում և ջրահեռացում

Ինչպես ջարդիչ կայանքի արտադրամասի շինարարության այնպես էլ շահագործման փուլերի ջրամատակարարման համար պայմանագիր կկնքվի Կոտայքի ոռոգման ջրանցքը շահագործող կազմակերպության հետ: Կամ որպես այլընտրանք կդիտարկվի նաև ցիստեռներով ջրի բերումը՝ պայմանագրային հիմունքներով, գնելով այն: Խմելու ջրի պահանջարկը արտադրամասում ապահովվելու է Արամուս գյուղի ջրամատակարարման ցանցից պայմանագրային հիմունքներով:

Տարածքում նախատեսված է տեղադրել նաև 1 հատ ջրի պահուստային տարողություն: Ջուրը օգտագործվելու է հանքաքարի վերամշակվող թափոնների խոնավացման և սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար:

Արտադրական ջրօգտագործում

Արտադրական կարիքների ջրօգտագործումը ընդգրկում է ջարդիչի մուտքի մոտ վերամշակվող հումքի խոնավեցումը և կուտակված հանքաքարի ու մանրացված քարի պահեստների ջրցանը:

Հանքաքարի խոնավացում

Հաշվարկը կատարվել է հետևյալ կերպ.

$$W_{\text{ջար.}} = L_{\text{տես}} \times Q, \text{ որտեղ՝}$$

Մշար.՝ ջարդիչների ջրապահանջը, մ³/տարի

Լտես.՝ ջրի տեսակարար ծախսը մեկ մ³ հանքաքարի հաշվարկով, ճլ/տ

Q՝ ջարդվող հանքաքարի և թափոնների քանակը, 638400 տ/տարի:

Մշար. = 8 լ/տ x 638400 տ/տարի = 5107200 լ կամ 5107,2 մ³/տարի:

Միջին օրական՝ 5107,2 մ³/տարի : 260 օր/տարի = 19.6 մ³/օր:

Ջրցան

Ջրցանը հաշվարկվում է ըստ պահեստների ընդհանուր մակերեսի և ջրի տեսակարար ծախսի.

Մպահ. = Կտես x S x P, որտեղ՝

Մպահ.՝ ջրապահանջը, մ³/տարի

Կտես՝ ջրի տեսակարար ծախսը մեկ ք.մ. հաշվարկով, 1.5լ/մ²

S՝ պահեստների ընդհանուր մակերեսը, 1000 մ²:

P՝ ջրցանի օրական քանակը՝ 2

Մպահ. = 1.5լ/մ² x 1000 մ² x 2 = 3000լ/օր կամ 3 մ³/օր:

Տարեկան ծավալը հաշվարկվում է տաք եղանակի չոր օրերի հիման վրա /առանց շաբաթ և կիրակի օրերի/.

3 մ³/օր x 138 օր/տարի = 414 մ³/տարի:

Խմելու-փնտրեսական կարիքներ

b) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

n₁ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

Մ₁ = S₁ x K₁ x T, որտեղ՝

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 100 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180 **Մ₁ = 100 x 0.0015 x 84 = 12.6 խմ/շին.**

ժամ.

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 36.6 խմ/շին. ժամ:

Աշխատանքային ռեժիմը՝ 260 օր/տարի, մեկ հերթափոխով՝ 8 ժամ/օր:

Սպասարկումը իրականացնելու են 10 բանվոր և 2 ԻՏԱ:

Ջրահեռացում

Նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական արտահոսք չի առաջանում: Ջարդիչների հանքաքարի խոնավացումը և ջրցանը ամբողջությամբ հանդիսանում է կորուստ:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝

$$W_{կենցաղ.} = W_{խ.տ.} \times (1 - \gamma), \text{ որտեղ՝}$$

γ ՝ կորուստները, 5 տոկոս /0.05/,

$$W_{խ.տ.}՝ 30.16 \text{ մ}^3/\text{տարի}:$$

$$W_{կենցաղ.} = 30.16 \times (1 - 0.05) = 28.65 \text{ մ}^3/\text{տարի կամ } 0.11 \text{ մ}^3/\text{օր}:$$

Տնտեսակենցաղային հոսքաջրերը կհեռացվեն արտադրական հրապարակում

նախատեսվող անջրթափանց հոր:

Արտադրական տարածքներում հոսքաջրեր չեն առաջանա:

Արտադրական և տնտեսակենցաղային ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռ

Աղյուսակ 6.5.

| Ջրօգտագործման նպատակը | Ջրօգտագործում, մ ³ /տարի | Ջրի կորուստ | | Ջրի անվերադարձ օգտագործում, մ ³ /տարի | Ջրահեռացում մ ³ /տարի |
|------------------------------|-------------------------------------|-------------|----------------------|--|----------------------------------|
| | | % | մ ³ /տարի | | |
| Արտադրական | | | | | |
| Հանքաքարի խոնավացում | 5107,2 | 100 | 5107,2 | - | - |
| Ջրցան | 414,0 | 100 | 414,0 | - | - |
| <i>Ընդամենը արտադրական</i> | 5521.2 | - | 5521.2 | - | - |
| Խամելու տնտեսական | | | | | |
| Աշխատողների խամելու կարիքներ | 30.2 | 5 | 1.55 | - | 28.65 |
| Ընդամենը | 5,551.4 | | 5,522.7 | - | 28.65 |

Ջարդիչի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է հանքավայրի ջրամատակարարման շրջանակներում: Ջուրը բերվում է KO-002 ջրցան-լվացող ավտոմեքենայով, կամ պայմանագիր կկնքվի ջրամատակարար կազմակերպության կամ ընկերության հետ: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է ՍՄ-ԲԼԸ-1.4 ջրի ցիստեռնով: Նախատեսվում է 1 ջրող ավտոմեքենա 5տ ջրի տարողությամբ, որը ջուրը ցնցուղում է տաք և չոր եղանակներին, աշխատանքային հրապարակը ջրելով 2 անգամ: Ջրցան մեքենայի աշխատանքը կապահովվի պայմանագրային հիմունքներով: Աշխատողներին սպասարկելու համար արտադրական հրապարակում տեղադրված է 1 հատ K-5 մակնիշի «Կոմֆորտ» սերիայի բեռնարկղային տիպի տնակ և 2 տեղանի հորանային տիպի արտաքնոց /սեպտիկ հոր/, որի տարողությունը պարբերաբար տեղափոխվում է մոտակա կայուղու ցանց հատուկ մեքենաների միջոցով:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արամուսի բազալտների հանքավայրում «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից բաց լեռնային աշխատանքներով իրականացնում է բազալտի արդյունահանում, ապարների մանրացում:

« Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրում Բազալտների ֆիզիկամեխանիկական հատկությունները կանխորոշում են բազալտների արդյունահանումն իրականացնել մեխանիկական եղանակով: Այն կատարվում է LIEBHERR R942 HD SL էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Մակաբացման ապարները T-130 բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ³/հերթ է, տեղափոխվում և կուտակվում են բացահանքի մակերևույթի վրա՝ նրա հարավ արևմտյան մասում գտնվող արտաքին լցակույտ: Արդյունահավաքված ջարդոտված բազալտները տեղափոխվում են հանքավայրի հյուսիս-արևելյան մասում գտնվող ջարդիչ կայանք (ՋՏԿ):

Բացահանքի արդյունաբերական հրապարակում տեղադրված են բեռնարկղային տիպի շինություններ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության ընկերությունը նախատեսում է նախկինում գործող ՋՏԿ-ի տարածքում կառուցել նոր քարի ջարդման-տեսակավորման կայան, որտեղ ջարդվելու և տեսակավորվելու են հանքավայրից արդյունահանվող հումքը և հանքարդյունահանման արդյունքում առաջացող թափոններ /մակաբացման ապարներ, արտադրական և շինարարական թափոններ/:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները դիտարկվում են ստորև.

8.1 Ազդեցություն մթնոլորտային օդի որակի վրա

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է ջարդիչի աշխատանքով, որի արդյունքում առաջանում է անօրգանական փոշի, իսկ տեխնիկայի շահագործման ժամանակ առաջանում են դիզելային վառելիքի այրման արգասիքներ: Հանքավայրում օգտագործվում են նաև բենզինային շարժիչներով մեքենաներ, սակայն միայն աշխատողների և իրերի տեղափոխման համար և դրանց արտանետումները հաշվարկներում չեն ներառվում:

Ջարդման գործընթացը ջարդիչ կայանքում իրականացվում է տեխնոլոգիական շղթայի միջոցով, որի կազմի մեջ մտնում են՝ բունկեր, ժապավենային սնիչ և ջարդիչ: Արդյունահանման համալիրում արտանետման աղբյուրներն են.

- Բացահանքը,
- Լցակույտը
- Ջարդիչ կայանքը:

Արամուսի բազալտների հանքավայրի համար մշակվել է սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ՝ հիմք ընդունելով փաստացի իրականացված հետազոտությունները և արտանետումները առաջնորդվելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 04 հունվարի 2024 թվականի «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշման պահանջներով:

Սույն բաժնում ներկայացվել են հանքավայրի շահագործման ընթացքում և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը: Փոշու արտանետումները կապված են մեքենաների տեղաշարժի և ջարդիչ կայանի աշխատանքի հետ: Ծխազագերի աղբյուր են հանդիսանում տրանսպորտային և տեխնիկական միջոցները: Մթնոլորտային արտանետումների հաշվարկները բերված են ստորև: Հավելված 2-ում, որը կցված է ՇՄԱԳ հաշվետվությանը կատարվել է արտանետումների քանակների և ցրման հաշվարկներ:

ա. Բունկերներ և փոխակրիչներ

Ջարդիչ կայանքի բունկերի և փոխակրիչների արտանետումների հաշվարկը իրականացվել է ըստ Методика по расчету валовых выбросов загрязняющих веществ в атмосфере предприятиями Россевзапстрой. ВРД 66-125-90. М, 1991.

Համաձայն այդ ձեռնարկի փոշու առավելագույն քանակը վարկյանում հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

- $G_{\text{п}} = C/3600 \times 1000 \times Kr \times K5 \times K7$, գ/վրկ, որտեղ՝
- C – տեսակարար փոշեառաջացումը, ըստ ձեռնարկի 3-րդ հավելվածի՝ 30 կգ/ժամ

- Kr – գործակից, որը հաշվի է առնում գրավիտացիոն նստեցումը, 0.4 (ВРД 66-125-90)
- K5 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.6
- K7 – գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.4
- **Gn = 30/3600 x 1000 x 0.4 x 0.6 x 0.4 = 0.80 գ/վրկ**
- Տարեկան՝ **0.8 x 3600 x 260 x 8 : 10⁶ = 5,99 տ/տարի:**

Ջարդիչներ

Ջարդիչների հաշվարկը իրականացվել է ըստ “МЕТОДИКА расчета вредных выбросов (сбросов) для комплекса оборудования открытых горных работ (на основе удельных показателей). Министерство топлива и энергетики Российской Федерации
 Ըստ սույն ձեռնարկի առանց փոշեկլանման համակարգի աշխատող ժամանակակից ջարդիչների փոշու տեսակարար արտանետումների գործակիցը հավասար է՝ 7.8 գ/տ հանքաքար:

Ջարդիչների տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝
 $240000 \text{մ}^3 \times 2.66 = 638400 \text{ տ/տարի}$: Արտանետումները կկազմեն՝

Gm = 638400 տ/տարի x 7.8 գ/տ = 4979520գ կամ 4,979 տ/տարի:

- Վարկյանում արտանետումները կկազմեն՝ **4,979 տ/տարի x 10⁶ գ/տ : 260 օր : 8 ժամ : 3600 վրկ = 0.665 գ/վրկ:**

Ընդամենը տարեկան արտանետումները կկազմեն՝ **5.99 + 4.979 = 10.969 տ/տարի:**

Վարկյանում արտանետումները կկազմեն՝ **0.80 + 0.665 = 1,465 գ/վրկ:**

Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար սույն հաշվետվությունում կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ:


Քանի որ ջարդիչ կայանքը գործելու է հանքավայրի մերձակա տարածքում, հաշվարկներում ներառվել են նաև հանքավայրի արտանետման աղբյուրները:

Որպես արտանետման աղբյուր գույքագրվել են բացահանքը, լցակույտը և ջարդիչ կայանքը, որոնցից արտանետվում է թվով 6 տեսակի վնասակար նյութ.

- Անօրգանական փոշի՝ 29,226 տ/տարի,
- Ածխածնի օքսիդ՝ 1,565 տ/տարի,
- Ածխաջրածիններ սահմանային՝ 0,361 տ/տարի,
- Ազոտի երկօքսիդ՝ 1,819 տ/տարի,
- Պինդ մասնիկներ /մուր/՝ 1,185 տ/տարի,
- Ծծմբային անհիդրիդ՝ 0,172 տ/տարի:

ՕՊՕ՝ 345,753 մլրդ. մ³/տարի:

Վնասակար գումարային ազդեցությամբ օժտված նյութեր են՝ ծծմբային անհիդրիդը և ազոտի երկօքսիդը:



Արտանետման աղբյուրների քարտեզ-սխեմա

Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի՝ առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման հանքավայրերի համար սանիտարապաշտպանիչ գոտին արտանետման աղբյուրից սահմանված է 300 մետր:

Աղյուսակ 8.1. Բոլոր աղբյուրներից մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը և քանակները

| Նյութի անվանումը | ՄԹԿ առավելագույն միանվագ, մգ/մ ³ | Նյութի արտանետումը, տ/տարի |
|---|---|----------------------------|
| 1 | 2 | 4 |
| Անօրգանական փոշի (SiO ₂ 20 – 70 %) | 0,3 | 29,226 |
| Ածխածնի օքսիդ | 5,0 | 1,565 |
| Ածխաջրածիններ սահմանային | 1,0 | 0,361 |
| Ազոտի երկօքսիդ | 0,2 | 1,819 |
| Մուր | 0,15 | 0,185 |
| Ծծմբային անհիդրիդ | 0,5 | 0,172 |

Հանքավայրի շահագործումն իրականացվում է առանց պայթեցումների: Հանքավայրի և ջարդիչ կայանքի բնույթը բացառում է վթարային կամ զարկային արտանետումների հնարավորությունը:

Ստորև բերված են արտանետման աղբյուրների և արտանետվող նյութերի բնութագրերը: Աղյուսակ 8.2. Արտանետման աղբյուրների և արտանետվող նյութերի բնութագրերը

| Արտադրություն արտադրամաս | Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները | Աշխատաժամե-րի տարեկան քանակը | | | | Արտանետման աղբյուրի անվանումը | | Աղբյուրների քանակը | | Աղբյուրի կարգաթիվը | |
|--------------------------|--|------------------------------|---|--------|------|-------------------------------|--------|--------------------|----|--------------------|----|
| | | Անվանումը | | քանակը | | | | | | | |
| | | ՆՎ | < | ՆՎ | < | ՆՎ | < | ՆՎ | < | ՆՎ | < |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Բացահանք | Հանքաքարի արդյունահանում | 1 | 1 | 2080 | 2080 | Հարթակ | Հարթակ | 1 | 1 | 1 | 1 |
| Լցակայան № 1 | Մակաբացման ապարների պահեստավորում | 1 | 1 | 8760 | 8760 | Հարթակ | Հարթակ | 1 | 1 | 2 | 2 |
| Ջարդիչ կայանք | Ապարների մանրացում | 1 | 1 | 2080 | 2080 | Հարթակ | Հարթակ | 1 | 1 | 3 | 3 |

8.2. աղյուսակի շարունակությունը

| Մաքրման ենթակա նյութերը/ Ապահովվածության գործակիցը, % | Մաքրման միջին աստիճանը/ Մաքրման առավելագույն չափը, % | Նյութի անվանումը | Արտանետումները | | |
|---|--|---------------------|----------------|-------------------|--------|
| | | | գ/վրկ | մգ/մ ³ | տ/տարի |
| | | | 33 | 34 | 35 |
| - | - | - Անօրգանական փոշի | 0,511 | 0,035 | 3,793 |
| - | - | - Ածխածնի օքսիդ | 0,209 | 0,014 | 1,565 |
| - | - | - Ածխաջրածիններ | 0,048 | 0,003 | 0,361 |
| - | - | - Ազոտի երկօքսիդ | 0,243 | 0,017 | 1,819 |
| - | - | - Մուր | 0,025 | 0,002 | 0,185 |
| - | - | - Ծծմբային անհիդրիդ | 0,023 | 0,002 | 0,172 |
| - | - | - Անօրգանական փոշի | 0,459 | 0,0758 | 14,464 |
| - | - | - Անօրգանական փոշի | 1,465 | 0,305 | 10,969 |

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

Քանի որ մոտակա բնակելի տարածքները գտնվում են ավելի քան 1360 մ հեռավորության վրա, համաձայն «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային

թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշման դրույթների, ֆոնային աղտոտվածությունը ցրման հաշվարկներում հաշվի չի առնվել:

Ռելիեֆի գործակցի հաշվարկ

Ըստ ՀՀ կառավարության 04 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշմամբ հաստատված կարգի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1),$$

որտեղ η_m -ը որոշվում է ըստ ստորև բերված աղյուսակի՝ կախված ռելիեֆի ձևից, որի կտրվածքները ներկայացված են նկար 1-ում, և չափողականություն չունեցող հետևյալ գործակիցներից՝ $n_1=H/h_0$ և $n_2= a_0/h_0$ (n_1 -ը որոշվում է մինչև տասնորդական ճշտությամբ, իսկ n_2 -ը ամբողջ թվի ճշտությամբ):

Այստեղ H -ը արտանետման աղբյուրի բարձրությունն է, h_0 -ն արգելքի բարձրությունն (խորությունն) է, a_0 -ն՝ ակոսի, խոռոչի կամ խութի կողային լանջի կիսալայնությունը, x_0 -ն՝ արգելքի մեջտեղից՝ ակոսի կամ խոռոչի դեպքում, և լանջի վերին եզրից՝ խութի դեպքում, մինչև արտանետման աղբյուրը եղած հեռավորությունը:

$$H = 5$$

$$H_0 = 95\text{մ}$$

$$X_0 = 500\text{մ}$$

$$a_0 = 1500$$

Ռելիեֆի գործակիցը որոշվում է՝

$$n_1 = h : H_0 = 5 : 95 = 0.05 \quad n_1 < 0.5$$

$$n_2 = a_0 : H_0 = 1500 : 95 = 15$$

Ելնելով այս ցուցամիջներից ձեռնարկի աղյուսակ 1-ից գտնում ենք $\eta_m = 1.3$

$$\varphi_1\text{-ը որոշվում է } X_0 / a_0 = 500 : 1500 = 0.333$$

Տեղադրելով բանաձևի մեջ՝

$$1 + 0.333(1.3 - 1) = 1.1:$$

Օդերևութաբանական բնութագիրը և գործակիցները, որոնք բնորոշում են բնակելի տարածքի մթնոլորտում վնասակար նյութերի ցրման պայմանները:

Աղյուսակ 8.3. Օդերևութաբանական բնութագրերը

| Հ/հ | Բնութագրերի անվանումը | Մեծությունը |
|-----|---|-------------|
| 1. | Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A | 200 |

| | | |
|----|---|-------|
| 2. | Տեղանքի ռելիեֆի գործակիցը | 1.1 |
| 3. | Տարվա ամենաշոգ ամսվա առավելագույն միջին ջերմաստիճանը, T °C | 29.0 |
| 4. | Տարվա ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը, T °C | - 2.9 |
| 5. | Միջին տարեկան «քամիների վարդը» %-ով | |
| | Հյուսիս | 6 |
| | Հյուսիս- Արևելք | 73 |
| | Արևելք | 4 |
| | Հարավ-Արևելք | 1 |
| | Հարավ | 7 |
| | Հարավ-Արևմուտք | 4 |
| | Արևմուտք | 4 |
| | Հյուսիս-Արևմուտք | 1 |
| 6. | Քամու բազմամյա միջին արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ) | 2 |
| 7 | Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ) | 24 |

Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը, կատարվել է «Էոս» համակարգչային ծրագրի միջոցով:

Հաշվարկների արդյունքները բերված են ՇՄԱԳ-ին կից ներկայացված Հավելված-2-ում: Ինչպես երևում է հաշվարկների արդյունքներից առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները կազմել են.

Աղյուսակ 8.4. Գեոնամերձ կոնցենտրացիաները

| Աղտոտող նյութը | Գեոնամերձ կոնցենտրացիաները | |
|---|----------------------------|-------------------|
| | ՍԹԿ մասով | մգ/մ ³ |
| Անօրգանական փոշի (SiO ₂ 20 - 70 %) | 0.26165 | 0.0785 |
| Ածխածնի օքսիդ | 0.08 | 0.4 |
| Ածխաջրածիններ սահմանային | 0.003176 | 0.003176 |
| Ազոտի երկօքսիդ | 0.0401 | 0.008 |
| Մուր | 0.033 | 0.00495 |
| Ծծմբային անհիդրիդ | 0.04 | 0.02 |
| Գումարային՝ NO ₂ + SO ₂ | 0.0501 | - |

Հավելվածում ներկայացված քարտեզներում երևում են սանիտարապաշտպանիչ գոտին և կոնցենտրացիաները:

Ստորև արտանետումների տարեկան և կարճաժամկետ ցուցանիշները:

Աղյուսակ 8.5. Արտանետումների քանակները

| Աղտոտող նյութը | Ընդհանուր արտանետումը | |
|---|-----------------------|--------|
| | գ/վրկ | տ/տարի |
| Անօրգանական փոշի (SiO ₂ 20 - 70 %) | 2,435 | 29,226 |
| Ածխածնի օքսիդ | 0,209 | 1,565 |
| Ածխաջրածիններ սահմանային | 0,048 | 0,361 |
| Ազոտի երկօքսիդ | 0,243 | 1,819 |
| Պինդ մասնիկներ /մուր/ | 0,025 | 0,185 |

| | | |
|-------------------|-------|-------|
| Ծծմբային անհիդրիդ | 0,023 | 0,172 |
|-------------------|-------|-------|

8.2. Հողային ծածկույթի վրա ազդեցություն

Անմիջապես ջարդիչ կայանքի գործունեությունը չի առաջացնում լրացուցիչ ազդեցություն հողածածկի վրա, քանի որ այն տեղադրվելու է արդեն իսկ խախտված հողատարածքում, որտեղ հողաբուսաշերտը գրեթե չի հանդիպում, կամ հանդիպում է հազվադեպ: Այնուամենայնիվ, նախատեսվում է հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառումներ: Հողի վերին շերտի պահպանման նպատակով, նախատեսվում է հանել հողի շերտը այն մասերում, ուր այն գերազանցում է 12 սմ, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո հետո օգտագործել խախտված լանդշաֆտը վերականգնելու և նախատեսվող կանաչապատման համար համար: Հանվող և պահեստավորվող հողաբուսական շերտի ծավալը նախնական գնահատվել է 50 խմ: Այն պահվելու է հատուկ հատկացված վայրում՝ լցակայանի հարևանությամբ գտնվող տարածքում: Ավելցուկ հողը ընդհանուր ծավալով կօգտագործվի տարածքի բարեկարգման և նախատեսվող կանաչապատման աշխատանքներում: Հողամասում բնակելի տարածքների ուղղությամբ և բարեկարգվող հատվածներում նախատեսված է կանաչապատման աշխատանքներ արագ աճող բարդու տեսակներով, որի համար կօգտագործվի պահեստավորված հողաշերտը:

8.3. Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող թափոնների բնութագիրը

Ջարդիչ կայանի աշխատանքի ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված ավտոդողերն ու կենցաղային աղբը, եռակցման խարամը, յուղոտված լաթերը, բանեցված կապարե կորտակիչներ և խոտան:

Բանեցված կապարե կուրակիչներ և խոտան

Ջարդիչ կայանում աշխատող երկու բեռնիչ և երկու ավտոինքնաթափի շահագործման արդյունքում ընկերությունում փաստացի տարեկան գոյանում է 0.1տ ժամկետանց բանեցված կապարե կուրակիչ և խոտան:

Այդ թափոնները պատկանում են վտանգավորության 2-րդ դասին, ծածկագիր՝ 92110100 13 01 2:

Թափոնի կազմը՝ պլաստիկ (պոլիպրոպիլեն) իրան՝ 10%, կապարե թիթեղ-ներ՝ 70-75%, էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ 15-20%:

Պլաստիկ իրան՝ ֆիզիոլոգիական տեսակետից գրեթե անվնաս է: Իրանի քայքայումից կամ այրումից կարող են առաջանալ ֆտալատներ: Ընկնելով մարդու օրգանիզմ,

Ֆտալատների միայն աննշան մասն է ներծծվում մարսողական համա-կարգով: Ֆտալատները կարող են նաև չնչին չափով գրգռել մաշկը և լորձաթաղանթը:

Կապարե թիթեղներ՝ կապարը կուտակվում է օրգանիզմում, առաջացնելով խրոնիկ թունավորում, ազդում է նյարդային համակարգի, տարբեր օրգանների և արյան վրա:

Էլեկտրոլիտ (ծծմբական թթվի 25% լուծույթ)՝ առաջացնում է մաշկի այրվածքներ, շնչուղիների և լորձաթաղանթների գրգռվածություն: Ծծմբական թթվի գոլորշիները շնչելու ժամանակ դժվարանում է շնչառությունը, առաջանում է հազ, երբեմն՝ լարինգիտ, տրախեիտ, բրոնխիտ և այլ հիվանդություններ: Բանեցված կապարե կուտակիչները հրդեհապայթյունավտանգ չեն, սակայն կուտակիչներում պարունակվող էլեկտրոլիտը օժտված է կոռոզիոն ակտիվությամբ և թափվելու դեպքում կարող է առաջացնել մետաղական և ոչ մետաղական իրերի քայքայում:

Տարածքում այս տեսակի թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կազմակերպություններում:

Տարածքը, որտեղ հետագայում անհրաժեշտություն կառաջանա բանեցված կուտակիչների պահպանում, պետք է ունենա օդափոխության համակարգ: Բանեցված կուտակիչները պետք է դրվեն հատուկ տակդիրների վրա, տակդիրի եզրերը պետք է ունենան 5սմ-ից ոչ պակաս բարձրություն: Հատակը պետք է պատրաստված լինի քիմիական ազդեցությունների նկատմամբ կայուն նյութից և բացառի թափված էլեկտրոլիտի ներծծումը հողային շերտ: Տարածքը, որտեղ պահվում են կուտակիչների թափոնները, պետք է հեռացված լինի վարչակենցաղային շինություններից:

Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ

Թափոններն առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում: Կորցնելով իրենց անհրաժեշտ հատկությունները յուղերը պարբերաբար փոխարինվում են նորերով: Կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%, ջուր 3.2%: ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանով հաստատված ցանկի այս թափոնի անվանումն է՝ «*Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ*», ծածկագիրը՝ 54100303 02 03 3:

Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Տարեկան առաջանում է մոտ 0.4 տ թափոն: Տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է Մասիս քաղաքի մասնագիտացված կազմակերպություններում:

Շարժիչների բանեցված յուղերի թափոններ

Տարվա ընթացքում կառաջանա շուրջ 0.4տ բանեցված շարժիչների յուղ: Թափոնները պատկանում են վտանգավորության 3-րդ դասին, կոդ՝ 54100201 02 03 3 «Բանեցված

շարժիչների յուղերի թափոններ»։ Բանեցված յուղերը հրդեհավտանգ են, ռեակցիոնունակություն և կոռոզիոն ակտիվություն չունեն։ Թափոնների կազմը. յուղ՝ 94.6 %; մեխանիկական խառնուրդներ՝ 2.1%; ջուր՝ 3.2%:

Տարածքում այս թափոնի պահում չի իրականացվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է Մասիս քաղաքի մասնագիտացված կազմակերպություններում:

Եթե անհրաժեշտություն առաջանա բանեցված յուղերի տեղում հավաքելու և պահելու ապա անհրաժեշտ է հետևել պահպանման կանոններին:

Բանեցված յուղերը հավաքվում են հերմետիկ փակվող մետաղյա տակառներում և պահվում հատուկ առանձնացված տարածքում: Տարածքը պետք է ունենա օդափոխության համակարգ, ծածկ և անջրաթափանց ու անյուղաթափանց նյութերից պատրաստված հատակ՝ օժտված դրենաժային համակարգով: Տարաները պետք է դրված լինեն մետաղական տակդիրների վրա: Տակդիրի ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան ընդհանուր ծավալի 5%-ը: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի տակառներում մնա բավականին ազատ տարածք՝ յուղի հնարավոր ընդարձակման համար: Պետք է խուսափել հողերի վրա յուղերի թափումից: Աշխատած յուղերը օգտագործվում են հիդրավլիկ համակարգերում և վորպես վառելանյութ:

Բանեցված դողածածկեր

Ծածկագիրը՝ 5750020213004: Կազմը՝ բութադիենային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%: Էկոթունավոր է, պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Էռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: ՋՏԿ-ի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների ընթացիկ սպասարկումը կատարվելու է Մասիս քաղաքի մասնագիտացված կազմակերպություններում: Տարեկան գոյանում է շուրջ 0.6 տ բանեցված դողածածկ:

Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Մեկ մարդու համար սահմանված նորման 0,3 մ³ (0,25տ/մ³) /տարի է: Հաշվի առնելով բացահանքում և ջարդիչ կայանում աշխատողների թվաքանակը (10 մարդ), առաջացող կենցաղային աղբի քանակը կկազմի 10x0.3 մ³ = 3 տ/տարի:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

Այս թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ըստ ՀՀ Կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման, գնահատվում է որպես «ցածր»: Այս տեսակի թափոնները շրջակա միջավայրի և մարդկանց առաջնության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու, քանի որ պարբերաբար տեղափոխվելու

են Արամուս բնակավայրի աղբավայր: Աղբահանության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Ելնելով այն հանգամանքից, որ տեղանքում լցակույտեր չեն առաջանալու ջարդիչ կայանը որպես թափոնի օբյեկտ չի համապատասխանում ՀՀ կառավարության 15 հունիսի 2017 թվականի N 689-Ն որոշման հավելված N1-ի վտանգավորության դասակարգման «Ա» կատեգորիային:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանա մոտ 20 խմ շինարարական աղբ /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Թափոնների վերամշակման օբյեկտում պահեստավորվող թափոնների բնութագրումն ըստ դրանց տեսակների, վտանգավորության դասի և ծավալների:

Բազալտե կոպճի արտադրամասում նախատեսվում է վերամշակել ընդերքօգտագործման և արտադրական թափոններ, ինչպես նաև շինարարական թափոններ: Թափոնների պահեստավորում վերամշակման օբյեկտում չի նախատեսվում:

Մակաբացման ապարները պահեստավորվում են բացահանքի հարևանությամբ ձևավորված լցակույտում և տեղափոխվում են ՋՏԿ մանրացման համար: Մանրացված ապարները ժամանակավոր պահեստավորվում են անմիջապես ՋՏԿ-ի մոտակայքում, որտեղից առաքիչները բեռնում են ինքնաթափ մեքենաների մեջ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում ընդերքօգտագործման թափոններից մակաբացման ապարները քիմիական ռեակցիաների մեջ չեն մտնում, մթնոլորտային օդի պայմաններում չեն վերափոխվում կամ օքսիդանում: Թափոնները հրդեհապայթյունավտանգ չեն, կոռոզիայի չեն ենթակվում և չեն առաջացնում վտանգավոր խառնուրդներ:

Մակաբացման ապարների վնասակար ազդեցության աստիճանը շատ ցածր է: Դրանք պատկանում են ոչ վտանգավոր թափոնների շարքին, որոնց վտանգավորության դասը շրջակա միջավայրի համար 5-րդն է (ծածկագիրը 3400011001995), այն գործնականորեն անվտանգ է:

Բացահանքի շահագործման ողջ ընթացքում հանքավայրը ծածկող մակաբացման ապարների ընդհանուր ծավալները կազմում են 59300մ³, այլովիալ դեյուլիալ նստվածքներ և 35800մ³ հողմնահարված, ջարդոտված բազալտներ:

Բազալտի հումքի վերամշակումից և արդյունահանման աշխատանքների ընթացքում առաջացող արտադրական թափոնները առաջանում են Ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված երկու հանքավայրերի շահագործման արդյունքում:

Թափոնների վերամշակման օբյեկտում վերամշակվող շինարարական թափոններն են՝

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 7.500մ³ ծավալով:
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 3,009,409.24մ³:

8.4. Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա

Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել բնակավայրից ավելի քան 1360մ հեռավորության վրա՝ գործող հանքավայրի տարածքում: ՋՏԿ-ի կառուցման աշխատանքների բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է: Համաձայն նախնական ուսումնասիրությունների՝ տեղամասի տարածքը զուրկ է հողային և բուսական ծածկույթից, չկան անտառներ, չեն արձանագրվել բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ, հետևաբար ՋՏԿ-ի կառուցման աշխատանքները չեն հանգեցնի տարածքի էկոհամակարգերի վրա նշանակալից բացասական ազդեցության, բացի այդ ՋՏԿ-ն տեղադրվելու է գործող հանքավայրի տարածքում, արդեն իսկ տնտեսապես յուրացված արտադրական տարածքում:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում, որտեղ արտադրամասի և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը՝ լանդշաֆտը դեգրադացված է (առկա են շահագործված հանքավայր, կամ իրականացվում են ընդերքօգտագործման աշխատանքներ): Այդ տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ տրամադրվող տարածքը գտնվում է անմիջապես ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Կենսաբազմազանության պահպանության նպատակով նախատեսված միջոցառումները ներկայացված են ՇՄԱԳ-ի 10-րդ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ գլխում:

8.5. Սոցիալական ազդեցությունը

Արտադրական գործունեությունը կազմակերպվելու է Աբովյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում: Արտադրամասի կազմակերպման աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հիմնական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից փոշու և ծխազագերի արտանետումներով, աղմուկի առաջացմամբ, երթևեկության ինտենսիվացման հետ կապված, աշխատողների աշխատանքի անվտանգության հետ կապված և սոցիալական այլ գործոնների հետ կապված: Արտադրական գործընթացների

ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունների շարքում կարելի է թվարկել հետևյալները՝

օդային ավազանի աղտոտում՝ հումքի, արտադրանքի տեղափոխման և հանքաքարի ջարդման ընթացքում,

հումքի տեղափոխման հետ կապված մերձակա բնակչությանը / բնակավայր/ պատճառվող անհանգստություն և անհարմարություններ

ծանր, բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների շարժի պատճառով երթևեկության ավելացում, ինտենսիվացում,

աղմուկի մակարդակի ավելացում՝ ջարդիչների և տրանսպորտային միջոցների աշխատանքի արդյունքում,

տեսանելի պատկերի փոփոխություն չի ակնկալվում, քանի որ ջարդիչը տեղադրվելու է փոս ընկած տարածքում,

բարձր, կույտերի առաջացման ժամանակ, քամիների որոշակի ուղղության դեպքում փոշու տարածում շրջակա տարածքներ:

Սակայն հաշվի առնելով մոտակա բնակելի տարածքներից արտադրական տարածքի հեռավորությունը /ավելի քան 1,4 կմ հեռավորությունների վրա/ սոցիալական ազդեցությունները էական չեն լինի:

Միևնույն ժամանակ ՋՏԿ-ի շահագործումը թույլ կտա ստեղծել աշխատատեղեր ինչպես անմիջապես տարածքում, այնպես էլ սպասարկող ծառայություններում: Դրանով իսկ բազմաթիվ ընտանիքներ կբարելավեն իրենց սոցիալտնտեսական պայմանները: Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Հնարավոր սոցիալական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման, կամ մեղմացման համար /<<Սոցիալական ազդեցությունների մեղման միջոցառումներ>> ենթազբաղվում/ և Բնապահպանական կառավարման պլանում ներկայացվել են միջոցառումների ծրագիր:

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊ ընկերությունը նախատեսում է արտադրամասի շահագործման աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացրել է 1-ին հանրային լսումը, որի ընթացքում քննարկվել է համայնքներին հնարավոր աջակցության ծրագրերը:

ՋՏԿ-ի աշխատանքների ընթացքում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի համար ընկերությունը պարտավորվել է տրամադրել ֆինանսական աջակցություն: Քննարկումներ են կազմակերպվելու համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները:

Արտադրամասի շահագործման փուլում կատարվելու է նաև համայնքի տնտեսական զարգացման ուղղվածության և հնարավոր զարգացման ուղղությունների վերաբերյալ ելակետային պայմանների հավաքագրում, որոնք հետագա շահագործական աշխատանքների ժամանակ հիմք կհանդիսանան համայնքում աջակցության երկարաժամկետ ծրագրերի մշակման համար:

- նոր աշխատատեղերի ստեղծում՝ արտադրամասի շահագործման ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) համար, որոնց իրականացումը հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ ընդերքօգտագործման հետ չկապակցված նոր արտադրանքի ստեղծման շղթայի մշակում և ներդրում հետագա գործընթացներում:

8.6. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից ջարդիչ կայանքի շրջանում հիմնական աղտոտիչի՝ փոշու աղբյուր է հանդիսանում նույն ընկերության բացահանքը: Համապատասխանաբար արտանետումների ցրման հաշվարկներում, որոնք ներկայացվել են ՇՄԱԳ-ին կից հավելվածներում, ներառվել են նաև հանքավայրի արտանետումները և գետնամերձ կոնցենտրացիաները ստացվել են համատեղ գործունեության արդյունքում:

8.7. Աղմուկ և թրթռում

Արդյունահանման և ՋՏԿ-ի աշխատանքների ժամանակ տեխնիկական միջոցների շահագործման ընթացքում առաջանում է աղմուկ: Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 80 ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակ

Շինարարական և շահագործման աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն ըստ արտադրող ընկերությունների հրահանգների: Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել

աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի: Արտադրական տարածքում ՋՏԿ-ի կառուցման և շահագործման ընթացքում օգտագործվող տեխնիկական շահագործելիս աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում Արամուս բնակավայրը, որը գտնվում է արտադրամասից շուրջ 1.4 կմ հեռավորության վրա: *Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝*

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում ձայնախլացուցիչների տեղադրում,
- բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 300մ):

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը $LA_{էլվ}$ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էլվ} - LA_{հեռ} - LA_{էկր} - LA_{կանաչ}$$

Որտեղ՝

$LA_{էլվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էլվ}=79ԴԲԱ$

$LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

$LA_{հեռ}$ 500մ-ի վրա կազմում է 28ԴԲԱ

$LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով: $LA_{էկր} = 14ԴԲԱ$

Հանքի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

$LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $LA_{կանաչ}=0ԴԲԱ$

Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էլվ} - LA_{հեռ} - LA_{էկր} - LA_{կանաչ} = 79 - 28 - 14 = 37ԴԲԱ:$$

Հաշվի առնելով ՋՏԿ-ի հեռավորությունը մոտակա բնակավայրերից /1.4 կմ/, նախալեռնային, թույլ ալիքաձև ձորակներով մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32ԴԲԱ (նորման 35ԴԲԱ):

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների և ՋՏԿ-ի աշխատանքի հետ: Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՎՆԱՍԻ ՀԱՇՎԱՐԿ

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի:

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \zeta q \Phi g \sum v_i \rho_i \quad (1),$$

որտեղ

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով, ζq -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական տարածքի համար՝ 4:

Φg -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն, $\Phi g = 1000$ դրամ:

v_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

ρ_i -ն (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, ρ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\rho_i = q (3 SU_i - 2 U\theta U_i), SU_i > U\theta U_i \quad (2),$$

որտեղ՝

$U\theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

SU_i -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ վնասակար նյութերի արտանետումների մթնոլորտում ցրման հաշվարկները ցույց տվեցին, որ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլարտելի նորմերի սահմաններում, $\rho_i = SU_i$ Հաշվարկների արդյուքները բերված են աղյուսակում:

Տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 9.1-ում:

Աղյուսակ 9.1

| Արտանետվող նյութերի անվանումը | Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները | | | Շգ | Փգ | Վի | Տնտեսական վնասը. << դրամ |
|-------------------------------|---------------------------------------|---|-----------|-----|------|------|--------------------------|
| | Si | q | Քi=Si x q | | | | U = Շգ Փգ Σ ՎiՔi |
| Անօրգանական փոշի | 29,226 | 1 | 29,23 | 0,6 | 1000 | 10 | 175 356 |
| Ածխածնի օքսիդ | 1,565 | 1 | 1,565 | 0,6 | 1000 | 1 | 939 |
| Ածխաջրածիններ | 0,361 | 1 | 0,361 | 0,6 | 1000 | 3,16 | 685 |
| Ազոտի երկօքսիդ | 1,819 | 1 | 1,819 | 0,6 | 1000 | 12,5 | 13 642 |
| Պ.Մ. /մուր/ | 0,185 | 1 | 0,185 | 0,6 | 1000 | 41,5 | 4 604 |
| Ծծմբային անհիդրիդ | 0,172 | 1 | 0,172 | 0,6 | 1000 | 16,5 | 1 703 |
| Ընդամենը | | | | | | | 196 929 |

Հանքավայրի և ջարդիչ կայանքի շահագործման արդյունքում հաշվարկված տնտեսական վնասը կկազմի՝ 196 929 ՀՀ դրամ:

10. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Արտադրության կազմակերպիչները պարտավոր են գործող նորմատիվներին համապատասխան ապահովել արտադրական գործընթացների անվտանգության կանոնները՝ կանխարգելող, մեղմացնող միջոցառումների միջոցով:

Պարտավորությունների թվում է ապահովել շրջակա միջավայրի որակի նորմատիվային պահանջները և մարդկանց առողջության համար բարենպաստ պայմաններ: Ստորև բերված են ՋՏԿ-ի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության մեղման հիմնական միջոցառումները, այդ թվում՝

- ապահովել հանքաքարի խոնավացման համակարգի անխափան աշխատանքը,
- պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել ջարդիչի և փոխակրիչի շարժիչները,
- կազմել հանքաքարի ստացման և արտադրանքի առաքման ժամանակացույց, նվազեցնելու համար ճանապարհների բերնվածությունը և բնակչությանը պատճառվող անհանգստությունը,
- Տրանսպորտային միջոցների երթևեկության կազմակերպում միայն ցերեկային հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու համար,
- տրանսպորտային միջոցների երթևեկության համար ժամանակացույցի մշակում՝ երթևեկության ինտենսիվությունը չգերազանցելով 20 րոպեն մեկ երթ հաճախականությունը
- իրականացնել հումք տեղափոխող ճանապարհների ջրցան շոգ և քամոտ օրերին,
- արտադրական տարածքը պահել բարեկարգ և խնամված վիճակում, թույլ չտալով աղբոտում, կանոնավոր աղբահանում

- տեխնիկա-տրանսպորտային միջոցների /շարժիչների/ պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը,
- տրանսպորտային միջոցների սպասարկում՝ Ծաղկաձորի մասնագիտացված կայաններում
- մշտապես հետևել խոնավացնող ջրի առկայությանը և ապահովմանը,
- պատվերների բացակայության ժամանակահատվածում կատարել կուտակված խճի ջրցան
- հողաձածկի աղտոտումը կանխելու նպատակով՝ օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում մետաղի և այլ արտադրական թափոնները հավաքել և տրամադրել հատուկ լիցենզիա ունեցող վերամշակող կազմակերպություններին

Հատուկ ուշադրություն է դարձվելու կենսաբազմազանության պահպանության միջոցառումներին: Նախատեսվում է իրականացնել բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781 որոշման դրույթները: Ըստ անհրաժեշտության և կիրառելիության իրականացնել հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող

բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ջարդիչ կայանի տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Ջարդիչ կայանի տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի հետ:

- Աշխատակիցների համար հատուկ դասընթացների կազմակերպում՝ շրջանում հայտնի ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ, վարքագծի կանոնների ներկայացում:

- Նախքան աշխատանքների սկիզբը՝ տարածքի տեղազննում թռչունների բների հայտնաբերման և տեղափոխման նպատակով: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել թռչնագետի մասնակցությամբ:

- Նախքան աշխատանքների սկիզբը տարածքի տեղազննում՝ սողունների հայտնաբերման և տեղափոխման նպատակով: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել հերպետոլոգի մասնակցությամբ:

Այս միջոցառումների իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշման, ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումների, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջներից:

Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- ✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
 - ✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
 - ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
 - ✓ պետական մարմինների ծանուցում,
 - ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:
- Բնապահպանական և սոցիալական միջոցառումները մանրամասն կերպով ներկայացված են ՇՄԱԳ-ի Հավելված 1-ում ներկայացված բնապահպանական կառավարման պլանում: Բնապահպանական միջոցառումների ծախսերը ներկայացված են ԲԿՊ-ում:

Սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումներ

Հանքավայրի և ջարդիչ կայանի շահագործման ընթացքում բնակչության վերաբնակեցում չի նախատեսվում: Շահագործման աշխատանքներին մասնակցություն կունենան 12 մարդ:

Ներկայացվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավորությունների նախնական չափը և ժամկետները՝

| Հ/հ | Պարտավորությունների անվանումը | | Կատարման ժամկետը | Ներդրումների չափը, հազ. դրամ |
|-----|--|-----------|---------------------|----------------------------------|
| 1. | Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական մասնակցություն | ծրագրերին | Յուրաքանչյուր տարի | 150.0 |
| 2. | Մանկապարտեզի, վերանորոգման աշխատանքներին ֆինանսական մասնակցություն | դպրոցի | Յուրաքանչյուր տարի | 200.0 |
| 4. | Միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն | | Ըստ անհրաժեշտության | Շինարարական տեխնիկայի տրամադրում |

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | | | |
|--|--|--|--|--|

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

11. ԱՆՔԱՐԵՆՊԱՍՏ ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ջարդիչ կայանքի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար շահագործող ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է ստորև ներկայացված միջոցառումները.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման դեպքում պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ա. I կատեգորիա՝ խստացնել տեխնոլոգիական գործընթացների հսկողությունը
- բ. II կատեգորիա՝

- դադարեցվում է հանքաքարի բեռնաթափման գործընթացը գ. III կատեգորիա
- դադարեցվում է հանքաքարի բեռնման գործընթացը
- կանգնեցվում է ջարդիչը:

8.1 Հրդեհային անվտանգություն

Ա. Արտադրությունում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինի հակահրդեհային ավտոմատ սարքով, որը վերահսկում է դրա տարածքում հրդեհի յուրաքանչյուր բռնկում:

Բ. Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:

գ. Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:

Դ. Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

8.2 Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ բազաների գործունեությունը դադարեցվում է,

հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Քարամշակման արտադրամասի կոնսերվացման նպատակներն ու խնդիրները ներառում են.

- բնակչության առողջության և անվտանգության ապահովումը,
- կոնսերվացումից հետո շրջակա միջավայրի վերականգնումը տարածքների հետագա օգտագործումը,
- ապահովումը այն բանի, որ նվազագույնի հասցվեն կամ բացառվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, լանջերի անկայունությունը, հողերի էրոզիան
- սոցիալ – տնտեսական հնարավորությունների առավելագույն ապահովումը:

12. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շրջակա միջավայրի մշտադիտարկումը /Էկոլոգիական մոնիթորինգը/ շրջակա միջավայրի, այդ թվում շրջակա միջավայրի բաղադրիչների, բնական էկոլոգիական համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների, դրական և բացասական տեղաշարժերի, իրավիճակի համալիր դիտարկում է, որը թույլ է տալիս գնահատել և կանխատեսել շրջակա միջավայրի վիճակի փոփոխությունները: Էկոլոգիական մշտադիտարկման նպատակներն են. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և նորմավորումը, ազդեցության աղբյուրների վերահսկումը:

Համաձայն ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված

«ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ, ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԼԱՆՎՈՐՎՈՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ» կարգի 2-րդ կետի՝ Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումների ցուցիչները մշակվում են ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը կարգով սահմանված N 1 ձևին համապատասխան, որը բերված է ստորև, **սահմանվել է արդեն իսկ հանքավայրի արդյունահանման աշխատանքային նախագծով և ՇՄԱԳ-ով**

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ Ձև N 1

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտարկումների տեսակը | Նվազագույն հաճախականությունը |
|---------------------------|---|---|--|---|
| Մակերևութային ջրեր | շահագործական փորվածքների արտահոսքեր, հիդրոտեխնիկական կառույցների արտահոսքեր, ջրերի հեռացման համակարգեր, կենացաղային արտահոսքեր | ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, հոսքի ուսումնասիրություն | շաբաթական մեկ անգամ |
| Ստորերկրյա ջրեր | հանքավայրի շրջակայքում առկա բնական աղբյուրների ելքեր, ստորգետնյա ջրերի հորիզոնների դիտակետեր | - ջրերի քիմիական կազմ, - մակարդակ | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն | ամսական մեկ անգամ |
| Մթնոլորտային օդ | բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ, ըստ քամիների վարդերի | - հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին | Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով | շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | գերակշռող ուղղությունների՝ արտանետումների աղբյուրից 5 կմ հեռավորություն | | | |
| Ջողային ծածկույթ | շահագործական փորվածքներ, արտադրական հրապարակ, ընդերօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, վերամշակող գործարանների, արտադրամասերի շրջակայք | - հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը | նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով | - տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | ընդերօգտագործման տարածքին հարակից շրջան | տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն | հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում | տարեկան մեկ անգամ |

Քանի որ Արամուսի բազալտի հանքավայրի տեղամասի տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան, հետևաբար, ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով ջարդիչ կայանքի հիմնական բնապահպանական ռիսկերից մշտադիտարկումները լրացուցիչ կատարվում են հետևյալ պարամետրերի համար:

| h/h | Նմուշառման կամ վերահսկողության տեղամասը /վայրը, օբյեկտը/ | Չափվող կամ վերահսկվող միջավայրը և պարամետրերը | Չափման կամ վերահսկման մեթոդը և չափողականությունը | Թույլատրելի սահմանը | Չափման կամ վերահսկման հաճախականությունը |
|-----|--|---|--|-------------------------------------|---|
| 1 | Բացահանքի ուղղությամբ, արտադրամասի եզրագծով | Փոշի Աղմուկ | Գրավիմետրիկ Շարժական | 0.5 մգ/մ ³ 80 դԲա | Ամսական |

| | | | աղմկաչափ | | ամսական |
|---|------------------------|---|-------------------------------|---------------------------------|--------------------------------|
| | Ջարդիչ կայանքի տեղամաս | Փոշի Աղմուկ Հողային ծածկույթ | Գրավիմետրիկ Շարժական աղմկաչափ | 0.5 մգ/մ ³ 80 դԲա | Ամսական ամսական |
| 3 | Մոտեցնող ճանապարհներ | Հողային ծածկույթ Փոշի Տրանսպորտային միջոցների վիճակը, | Տեսչական ստուգում | Մեքենաների աղմուկի մակարդակը | Ըստ անհրաժեշտության կամ բողոքի |

Վերամշակման օբյեկտի տարածքում կատարվելու են մթնոլորտային օդում անօրգանական փոշու կոնցենտրացիայի չափումներ:

Ջարդիչի տեղակայման վայրում կատարվելու է նաև հողային շերտի նմուշառում՝ աղտոտվածությունը վերահսկելու և գնահատելու նպատակով տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

ՄՇԱԳԻՏԱՐԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԶԱՐՏԵԶ



Մոնիթորինգի միջոցառումների /փոշու աղմուկի, հողային ծածկույթի չափումներ/ իրականացման համար կպահանջվի տարեկան 250.000 ՀՀ դրամ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 540.000 դրամ:

Ստորև բերված են վերամշակման օբյեկտի մոնիթորինգի դիտանցի կետերի տեղադիրքը և չափումների կարգը:

1. Արևոլորտային օդ կատարվող /արտադրական հրապարակ/ աղտոտող նյութերի
2. (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
Արտադրական տարածքում և հարակից տարածքներում մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռնի ստեղծել տեղեկատվական հենք՝ հսկելու համալիրի գործունեության հետագա շարունակական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Մշտադիտարկումների արդյունքները շրջակա միջավայրի նախարարություն են ներկայացվելու գումարային՝ համալիրի համար /հանքավայրի և արտադրամաս/:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն որոշմամբ
2. «ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ Արամուսի բազալտների հանքավայրի շահագործման նախագիծը
3. «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04 հունվարի 2024 թվականի N 32-Ն որոշումը
4. ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների ցանկը
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
6. «ВРЕМЕННОЕ МЕТОДИЧЕСКОЕ ПОСОБИЕ ПО РАСЧЕТУ ВЫБРОСОВ ОТ НЕОРГАНИЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ В ПРОМЫШЛЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ», Минпромстрой СССР, 1987

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Արամուսի բազալտների հանքավայրի և ջարդիչ կայանքի

Բնապահպանական կառավարման պլան

| Նախատեսվող գործունեության գործողությունները | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները | Առաջարկվող նեղմացնող միջոցառումները | Իրակա-նացման ժամանակացույցը | Պատասխանատու մարմինները | Միջոցառումների մոտավոր ծախսերը |
|---|--|--|---|---|---------------------------------------|
| <p>ՋՏԿ-ի կառուցում և շահագործում և խճի տեղափոխություն</p> | <p>Մթնոլորտային օդի աղտոտում, Հողածածկի աղտոտում, Մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստություն</p> | <p>1/ Տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է պարբերաբար ենթակրվեն ստուգման, առանձնապես շարժիչները, պարբերաբար կամ ստուգման արդյունքում՝ կարգաբերվեն</p> <p>2/ Տեխնիկատրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը</p> <p>3/Տրանսպորտային միջոցների սպասարկումը կատարել մոտակա մասնագիտացված կայաններում</p> <p>4/Տրանսպորտային միջոցների երթևեկությունը կազմակերպել միայն ցերեկային ժամերին</p> <p>5/Տրանսպորտային միջոցների երթևեկության համար մշակել ժամանակացույց այնպես, որ երթևեկության ինտենսիվությունը չգերազանցի 15 րոպեն մեկ երթ</p> | <p>Աշխատանքային օրերի ցերեկային ժամերին</p> | <p>Ընկերություն, վերահսկողությունը՝ համայնքապետարան</p> | <p>Ընթացիկ ծախսեր</p> |

| Նախատեսվող գործունեության գործողությունները | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները | Առաջարկվող նեղմացնող միջոցառումները | Իրականացման ժամանակացույցը | Պատասխանատու մարմինները | Միջոցառումների մոտավոր ծախսերը |
|---|---|---|------------------------------|---|--|
| Զարդիչ կայանքի շահագործում | Աղմուկ, Մթնոլորտային օդի աղտոտում, Հողածածկի աղտոտում Կենսաբազմազանություն | <p>1/ Մշտապես հետևել ջրցանի համար ջրի առկայությանը</p> <p>2/ Պատվերների բացակայության ժամանակահատվածում կատարել կուտակված խճի ջրցան</p> <p>3/ Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում</p> <p>4/ Մետաղի և այլ արտադրական և թափոնները հավաքել և տրամադրել հատուկ լիցենզիա ունեցող վերամշակող կազմակերպություններին</p> <p>5/ Իրականացնել կենսաբազմազանության մշտադիտարկումներ արտադրական տարածքի հարևանությամբ ՀՀ Կարմիր գրքի տեսակներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցառումներ</p> <p>6/ Իրականացնել կանաչապատման աշխատանքներ ծառատունկի միջոցով բնակելի տարածքի ուղղությամբ՝ փոշեկլանող ծառատեսակներով</p> | Շահագործման ամբողջ ընթացքում | Ընկերություն, վերահսկողությունը՝ համայնքապետարան | Ընթացիկ ծախսեր 40.0 հազ.դրամ (տարաների գինը) 80.0 հազ.դրամ (բետոնապատ հատակի գինը) 100.0 հազ.դրամ |

| Նախատեսվող գործունեության գործողությունները | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները | Առաջարկվող նեղմացնող միջոցառումները | Իրականացման ժամանակացույցը | Պատասխանատու մարմինները | Միջոցառումների մոտավոր ծախսերը |
|--|--|---|---|---|---|
| | | | | | 150.0 հազ.դրամ |
| Հանքաքարի և մանրացված խճի տեղափոխություններ և ջարդիչ կայանքի շահագործում | Աշխատանքի անվտանգության և սոցիալական պայմանների ապահովում, Աղմուկի մակարդակի բարձրացում | 1/Կենցաղային աղբի համար աղբամանների տեղադրում: Կանոնավոր աղբահանում 2/ Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ 3/ Աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները, հակահրդեհային միջոցները: 4/ Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով: 5/Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում: 6/Չափիչ սարքավորումներով մոնիթորինգը պետք է իրականացվի, ոչ պակաս քան ամիսը մեկ անգամ | Ջարդիչ կայանքի շահագործման ամբողջ ընթացքում | Ընկերություն, վերահսկողությունը՝ համայնքապետարան | 50.0 հազ.դրամ Ընթացիկ ծախսեր Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր Ընթացիկ ծախսեր 120.0 հազ.դրամ |



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 հունիսի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԱՐՔԱՐԱՐՏ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Աբովյան գյուղ Արամուա Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 13 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 23.06.2022թ. 5977

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-013-0161-0110

Մակերեսի չափը (հա)՝ 4.0032

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդերքի օգտագործման համար տրամադրված, Վարելահող, Արոտավայր

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 28062022-07-0082, գաղտնաբառ՝ SNYC171VWFQS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|-----|----------------------|-------|---------|--------------------------|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագրի գործողության ժամկետը՝ 18 տարի:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՏԻՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 28062022-07-0082, գաղտնաբառ՝ SNYC171VWFQS

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





Կադաստրի
կոմիտե

Փաստաթղթի ծածկագիր՝ 19072024-0053
Փաստաթղթի գաղտնաբառ՝ 8EE9ZRQN



Տեղեկանք

Անշարժ գույքի միավորի որակական և քանակական բնութագրերի վերաբերյալ

Անշարժ գույքի հասցե՝ Մարզ Կոփայք, համայնք Արովյան գյուղ Արամուս Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 13 հողամաս

Հողամասեր (1)

Հողամաս - 1

Կադաստրային ծածկագիր 07-013-0161-0110

Մաս - 1

Նպատակային նշանակություն Գյուղատնտեսական

Գործառնական նշանակություն կամ հողատեսք Վարելահող

Մակերես 0.14251 հա

Մաս - 2

Նպատակային նշանակություն Արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակություն կամ հողատեսք Ընդերքի օգտագործման համար տրամադրված

Մակերես 4.00324 հա

Մաս - 3

Նպատակային նշանակություն Գյուղատնտեսական

Գործառնական նշանակություն կամ հողատեսք Արոտավայր

Տեղեկատվությունը տրամադրված է Կադաստրի կոմիտեի տվյալների միասնական էլեկտրոնային բազայից առցանց՝ ինքնաշխատ եղանակով:



Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային ընտրության արդյունքների հաստատումը կատարվում է հիմնականում <https://veri.yegh.gov.am> կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱԼՔ)

N ԼԹ-1125-24 21.10.2024թ.

Օրյելտ Կառուցում, Բազայտե կոպիճի արտադրամաս,

(օրյելտի անվանումը, կառուցում, վերականգնում, ուժեղացում վերականգնում, գործարանական նշանակության փոփոխություն)

(հավկյրճ բնորոշումը, հզորությունը)

Նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիճ, ռիսկայնության աստիճանը՝ IV նախագծային կիստարթթերի մշակման համար:

(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը՝ Մարզ՝ Կոտայք, համայնք՝ Աբովյան գյուղ Արամուս Տիգրանաճորի խճուղի 3-րդ նրբանցք 13 հողամաս, 07-013-0161-0110

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող «ԱՐՔԱՐԱՐՏ»

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջարկարանքի տրամադրման հիմքը՝ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ԱՐՔԱՐԱՐՏ» ՄՊԸ 28062022-07-0082

(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ

կիստարթթերը)

Առաջարկարանքի գործողության ժամկետը

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

Ն Ա Ն Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Մ Ս Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը
(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

- 1. Հողամասը գտնվում է Անդերքի օգտագործման համար տրամադրված, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական
- 2. (*) Հողամասի չափսերը (հողամասի դիրքը քարտեզաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը) 4.0032
- 3. Հողամասի առկա վիճակը (հողամասի սահմանները՝ կողողինատային նշանարմամբ, մակերեսը(հա)) Հողամասը ծանրաբեռնված չէ
- 4. (*) Տրանսպորտային պայմանները (ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ ջանդման ենթակա) առկայությունը, (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն) Ներհամայնքային նշանակության ճանապարհ
- 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) (ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն) Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ:

(Նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Հարևանությամբ գտնվող հողամասեր և տարածքներ

(Կից հողագտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված պլանային)

7. Քնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Առկա չեն

(հուշարձանի անվանումը)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներարանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Ց Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Մշակել նախագիծ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:

(եյնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բազակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, արտադրություններ ճանաչող նախագծերի ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

ըստ նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

ըստ նորմերի

9.3. (*) թույլատրելի բարձրությունը (մետր)

ըստ նորմերի

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀԵՆ ՈՒ-6-02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովման (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման մի ջոջառումներ և այլն)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

ըստ նորմերի

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի տարածքին՝ տոկոսներով) (%)

ըստ նորմերի

9.6 կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

ըստ նորմերի

9.7 այլ պահանջներ

• Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները • Համաձայն Աբովյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Առկա չէ

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն նորմերի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1 (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2 (*) Էլեկտրամատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցություն մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

Համաձայն նորմերի

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Առկա չեն

12.6. աղբահանություն

համայնքային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(ռեյինֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Ըստ նախագծի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ըստ նորմերի

19. Շրջակա միջավայրի պահպանում

ապահովել շրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Երեք տարի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

21.10.2027թ., նախագծման փուլերը՝ աշխատանքային նախագիծ,

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Համալիր փորձաքննություն հարկավոր է, Պարզ փորձաքննություն հարկավոր է

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

չի պահանջվում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ ելքի գալիս նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փուլի դասն հետադարձությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Նորմերի համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում

• Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտահորձողի) հետ)